№ 134 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 22

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 22 № 134

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ամեն տող 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տիգրան, Կոստանդին, Իւղարեր, Կոստի, Գէորգ, Հմայեակ և Սարգիս Աշճեանցները յայտնում են ազգականներին և ծանօթներին, առաջին երկուսը իրանց թանկագին որդու, իսկ վերջինները իրանց սիրելի և անմոռանալի եղբօր՝

ԵՐՈՒԱՆԴ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԱՇՃԵԱՆՑԻ

վաղաժամ մահը, որը տեղի ունեցաւ երեքշաբթի, յունիսի 20-ին, գիշերվայ ժամը 12-ին, կարճառև և ծանր հիւանդութիւնից յետոյ։ Յուղարկաւորութիւնը այսօր, յունիսի 22-ին, առաւօտեան ժամը 10-ին, Մ. Թբիլիսեան հիւանդանոցից դէպի Թանդոյեան եկեղեցին։ Թաղումը նոյն օրը Խօջիվանքի գերեզմանատունը։

„Ա. ՓՐԻԳՕՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ." ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

սրանով յայտարարում է, որ պետական փոխառութեան I առաջին կարգի վիճակախաղի տոմսակները սոյն 1906 թ. յուլիսի 1-ի տնօրաժից—ամեն մի տոմսակն ապահովագրում է 5 ռուբլի 60 կոպ. չը հաշված մարկայի փողը։

Գրասենեակը վերադիր վճարով կամ հետադրով տոմսակներ չէ ապահովագրում։

(հ.կ.ե.) առ 1—3

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՈՒՐՃ"

ամսագրի բաժանորդագրութիւնը։

Բաժանորդագրութիւնը տարեկան 10 ռուբ.։ Ազգային դպրոցների ուսուցիչների, աշակերտների, ուսանողների, գիւղացիների, արհեստաւորների և բանուորների համար 8 ռուբլի։ Ամսվճարով բաժանորդագրվելիս է 85 կոպէկ։ Բաժանորդագրութիւնը Թիֆլիսում բացի խմբագրութիւնից (Ճավճավաձեան փող., տ. № 12) ընդունվում է նաև «Գուտենբերգ» գրախանութում (Երևանեան հրապարակ)։ Դրսից դիմել՝ Тифлисъ «Мурчъ».

«ՄՈՒՐՃ»-ի յուլիսի համարը (1906 թ. № 7) լոյս է տեսնելու յուլիսի 1-ին և չի ուղարկվելու այն բաժանորդներին, որոնք չեն լրացրել այդ տարվայ բաժանորդավճարը։

(առ.) 1—5

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Գ. ՇԱԼԽՈՒՇԵԱՆԻ

ՀԱՅՈՑ ՀԱՐՅԸ ԹՈՒՐՔԱՍՏԱՆՈՒՄ

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

Գումարով գնողներին 20%. ճանապարհածախսը մեզ վրա. փոստ կանխավճար։ Тифлисъ Книжная торговля «Пушкинъ»։ Գրքերի պահեստը Ք. Մարտիրոսեանցի մօտ՝ Тифлисъ Годов. просп։ Օգտից տաս տոկոս ռուբլուց յատկացնվում է վերջին դէպքերից վնասված-ներին։ (հ.շ.) առ 1—2

ՀՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ազգէջ ընդհանուր է. Վերջին տեղեկութիւններ. Նորին Սուրբ Օծութեան Վեհափառ Կաթողիկոսին Ամենայն Հայոց Տ. Տ. Մկրտչի. Ճանփայի շրջակայքում. Շարժումներ. Հայ-Թուրքական խորհրդակցութիւն. Դատվածները և դատողները. Թիֆլիսի գերմանական շաբաթաթերթը. Չը պէտք է մոռացութեան տալ կրթական գործը ոչ մի դէպքում. Ուսուցչական համաժողով. Բարեգործական Ընկերութեան նիստը. Արեշի հինգ գիւղերի եկեղեցիները։ Դրիմ թեաղղու հայութեան ձայնը. Ջանփոլոները մեծազորդի դերի մէջ. Դարձեալ գիւղական լրագրի մասին. Մաքրեցէք ասպարէզը. Բաղուի և Նահանգի Թուրք ընտրիչները. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱԶԳԷՋ ԸՆԴՀԱՆՈՒՐ Է

I

Հայ-Թուրքական ընդհարումների ծագման հէնց առաջին օրերից բողոքի և ցասմունքի մի բուռն զգացմունք դուրս ժայթքեց այն բոլոր աղնիւ սրտերից, որոնք սեռնում էին ազգերի եղբայրութիւնը ան՝ երկված և երկու ժողովուրդներին զրված մի սոսկալի ու կործանիչ անդունդի առաջ։

Սկզբում մեզ բոլորիս խօսեցնում էր մարդասիրութեան և համերաշխութեան գաղափարների ոգին։

Մենք չէինք հաշվում իրականութեան այն քստմնելի երևոյթի հետ, որ երկու հարևան ազգերի միջև ծագել է սուր թշնամութիւն ամենասոսկալի արտայայտութիւններով։

Սրան առանձին կսկիծով մենք չանփսված էինք տեսնում մեր տարիներ շարունակ առաջ մղած հնամերաշխութեան քարոզներն ու կոչերը։

Ծանր էր գաղափարական տեսակէտով, բայց սրամաշ և յուսահատեցնող էր իբրև իրականութիւն, որովհետև ազգերը արտայայտվում էր անխնայ կոտորածներով, աւերումներով ու կողոպուտներով։

II

Սակայն շատ շուտով պարզվեց, որ ոչ միայն ընդհանուր մարդասիրական, այլ և տնտեսական և նոյնիսկ մասնաւոր շահերի տեսակէտով, վրա հասած ազէտը թշուառութիւն է սպառնում թէ հայերին, թէ Թուրքերին և թէ մեր ամբողջ երկրին։

Այնտեղ, ուր երկու ժողովուրդ խառն ապրում են և մշտապէս փոխադարձ յարաբերութիւնների մէջ են, ինչպէս կարող էր այդ ազգերի թշնամութիւնը չը վնասել նրանցից իւրաքանչիւրին։

Թուրքերի համար, որոնք շատ տեղ գործիք էին դարձել գաւառրութեան ձեռքին և նախայարձակում էին գործել հայերի վրա, շատ շուտով պարզվեց, որ իրանց արածը մի չափազանց սխալ քայլ է, որովհետև նրանց մի խոշոր մասը դեռ քաղաքական անգեսութիւն ունի և բանտված է անցնել հայ գիւղերի շրջաններով դէպի ամարային կամ ձմերային արօտները։

Քոչերը մեր երկրում չէ կարող շրջումներից ազատ լինել և ահա նա զգաց թէ ինչ դժոխքի մէջ է նա ընկել հայ-Թուրքական ընդհարումների պատճառով։

III

Մեր երկրի շատ տեղերից ստանում ենք տեղեկութիւններ, թէ ինչպէս հայ և մահմեդական Թուրք երկրագործներ, որոնք անտեսութիւն են վարում ջրարբի հողերի վրա, շատ ծանր վիճակի մէջ են ջրի պակասութեան պատճառով։

Իսկ լաւ յայտնի է, թէ մեր երկրի նման տաք տեղում, ինչ մեծ նշանակութիւն ունի ջուրը այն շրջանառում, որոնց տնտեսութեան համար ամառվայ տօթերին յաճախ մի քանի օրերը ճակատագրական նշանակութիւն ունեն։

Եթէ լրված յարաբերութիւնների պատճառով հայը կամ Թուրքը չը կարողացան գնալ դէպի ջրի հանդոյցները և ջուր կապել իրանց հողերի վրա, կամ թէ այժմ խլեցին մինչև ջրերը, այն ժամանակ ամբողջ գիւղեր դատապարտվում են ամենամեծ զրկանքների և թշուառութիւնների։

Ջրի վերաբերեալ այդպիսի փաստեր հարիւրաւոր և հազարաւոր են մեր երկրի իրականութեան մէջ։

IV

Ներկայ տարվայ ընթացքում Թուրք ազգաբնակութիւնը բազմաթիւ առիթներ ունեցաւ համոզվելու, որ նրա համար կործանիչ և մահացու է այն թշնամութիւնը, որ նա առաջ էր մղել չարամիտների ձեռքով։

Իսկ հայ ազգաբնակութիւնը, որ երբէք իր մտքով չէր անցկացրել, թէ նա մի օր բռնված կը լինի Անդրկովկասում մի միջազգային պայքարի և կռվի իր հարևանների հետ, աւելի ևս ամրապնդվեց իր այն վաղուցվայ համոզմունքի մէջ, որ մեր երկիրը կարող է առաջադիմել և զարգանալ միայն այն ժամանակ, երբ բոլոր ազգերը կընկնեն կուլտուրական շարժման ճանապարհի վրա և միահամուռ այժերով առաջ կը տանեն մեր երկրի բարգաւաճման գործը։

Թշնամութիւնը կործանեց մեր երկիրը և խլեց մեր երկրից աւելի քան հարիւր միլիոն ռուբլու մի հարստութիւն, ոչ մի օգուտ չը տալով ոչ ոքի։

Եւ ինչն է սարսափելի. դա այն է, որ երկիրը կործանված է իր դաւաճանների ձեռքով։

V

Կործանվել է, ճիշտ է, դաւադրութեան թելադրութեամբ։

Բայց թշուառ է մի երկիր, թշուառ է և նրա ազգաբնակութիւնը, եթէ դիւական թելադրութիւնները այդքան մեծ և ընդարձակ ասպարէզներ են գտնում իրանց յանցաւոր նպատակների համար։

Մարդ սարսափ է զգում, տեսնելով թէ ինչ առատ հունձ է վերցրել դժոխային այն դաւադրութիւնը, որ զրգռելով կրօնական և ազգայնական կրքերը, ծլարձել է մեր երկրում, բաժանել ազգաբնակութեան ոյժերը և այդպիսով իբր թէ հանել պետական շահերի որոշ տեսակ պաշտպանութեան։

Հետևանքը այնքան սոսկալի եղաւ, երկիրը այնպէս քայքայվեց, որ մենք հասանք թշուառութեան վերին սահմանին։ Ոչ ոք, ոչ պետութիւնը, ոչ հայը, ոչ Թուրքը, այո, ոչ ոք ոչ մի շահ չը ստացաւ և մեր առաջ ծուացաւ մի ընդհանուր թշուառութիւն, մի սարսափելի աղէտ։

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւրոպայից ստացված հայ լրագիրները և մեր ստացած մասնաւոր տեղեկութիւնները հաղորդում են մի ծանրակշիռ լուր։ Թիւրքաց սուլթան Աբդուլ-Համիդի հրամանով յարքունիս են զրաւված Սսի կաթողիկոսական աթոռին պատկանող կալուածները (հողերը), յանձնելու համար Ռուսաստանից գաղթած չերքեզներին։ Տեսնելով, որ զրանով Սսի կաթողիկոսութիւնը զրկվում է իր գոյութեան միջոցներից և ազգային սեփականութիւնները գրաւվում են, Սսի կաթողիկոս Սահակ Խապայանը հրաժարվել է կաթողիկոսութիւնից։

—

Իգդիրից յունիսի 19-ին գրում են մեզ. Այսօր լուր ստացվեց, որ Դարաղա կայարանում դէպի Կողբ ասնող ճանապարհի վրա քնած ժամանակ սպանված է մի հայ վարպետ։ Սպանութիւնը կատարվել է երկու ստրաժնիկների ներկայութեամբ, որոնցից մէկը ռուս է, իսկ միւսը սուլթանաբաղցի Բահրամբէգօվը։ Գաւառապետը գնացել է դէպքի տեղը։ Մանրամասնութիւնները յետոյ կը հաղորդենք։

—

Ախալցխա, 19 յունիսի

Մի էջ ժամ առաջ քաղաքումս ստացին իրարանցում ընկաւ մի քանի հրաշէնների ձայնից. բոլորը խանութները փակեցին և սկսեցին փախչել տուն։ Հարբածի մէկը ատրճանակ է արձակել, ստրաժնիկները կամեցել են զինաթափ անել, իսկ հարբածը փախչում է։ Ստրաժնիկը և մի հայ պօլիցիական ատգիսն ազմուկ են հանում, թէ մեզ վրա հայերը զալզ տուին։ Գաւառապետը խիստ անպատուել է երկուսին էլ այդ սուտ զեկուցման համար։ Երբ հասարակութիւնից մի քանիները դիմում են հայ ստրաժնիկներին և պօլիցիականին խառնակութեան պատճառն իմանալու, վերջինները փոխանակ միմտեցնելու, հրացաններն ուղղում էին հասարակութեան վրա և հայհոյում։ Գաւառապետը իրան շատ լաւ էր պահում։

Ն. Տէր-Գրիգորեան

—

Ախալցխա, 19 յունիսի

Առաւօտվայ դէպքերը աւելի պարզեցին։ Խառնակութեան ժամանակ ստրաժնիկների գնդակներից վիրաւորվել են վեց հոգի, մէկը վտանգաւոր։ Գաւառապետը ամեն միջոց ձեռք առաւ ապագայ բարդութիւնների առաջն առնելու։ Ակնատեսը պատմում է, որ այդ մի հարբածի գնդակի մասին հայ պօլիցիականը և ստրաժնիկը զեկուցել են իբր թէ հայերը իրանց վրա զալզ են տուել։ Մի հարբածի գնդակը զալզ է դառնում և սակայն իրանցից ոչ ոք չէ վնասվում։ Գաւառապետը խիստ անպատեհ է այդ վերաբերմունքի համար զեկուցողներին։

Ն. Տէր-Գրիգորեան

—

Թէօդոսիա, 20 յունիսի։ Առաւօտեան գլխաւոր փողոցներից մէկում մի հայի ձեռքով սպանվեց հարուստ հայ վաճառական Արուսովը։ Մարդասպանը բռնվեց։ Սպա ութեան պատճառը եղել է տեղական հայ-ց եկեղեցու կառավարութեան վէճերը և երկպառակութիւնները։

(Հ. Գ.)

—

Իզմիր, յունիսի 18-ին

Գեներալ-Խանհանդպետ Եացկեվիչը Իզմիրից հեռանալու օրը հաւաքեց բոլոր հայ և Թուրք գիւղերից ներկայացուցիչներ, յորդորից հանգիստ լինել, անցածը մոռացութեան տալ և յայտնեց. «Իսկ եթէ նորից պատահի, զօրքը անխնայ կը կոտորի մեզաւոր կողմը»։ Իսկ այն գիւղերը, որոնք ենթարկված են էկզէկուցիայի և տուգանքի, էկզէկուցիան ներում եմ, իսկ տուգանքները պէտք է հաւաքել և յանձնել սպանվածների և վիրաւորների ընտանիքներին»։ Հայերը պէտք է վճարեն 2425 ռուբլի, իսկ Թուրքերը 1650 ռուբլի. սրանց հետ չը պէտք է հաշուել Բիրից վերցրած 2000 ռ. և Մալաքլուից 800 ռ., որը մինչև այժմ չէ ստացված։

Պ. Նահանգապետը յորդոր կարդալուց յետոյ ճանապարհվեց Երևան։

Մալաքլու գիւղում Թուրքերը ժողով են գումարում, նախագահութեամբ սեղրեատար պ. Մամեդի և մի խնդրագիր—աղերսագիր են կազմում, պ. Նահանգապետին ներկայացնելու, որով թւում են հայերից աչքի ընկնող երիտասարդներին և ընդհարման պատճառը համարում, բայց մեծամասնութիւնը, յանձին Ադաքէկ Մակինսկու, չէ համաձայնում և այդպիսով Թուրքերը բաժանվում են երկու մասի։ Խնդրագիրը մնում է անկատար։

Սուրմալուի ընդհարումը սթափեցրեց Թուրք ժողովրդին. կարծես հասկացել են իրանց գլխին գալիք չարիքը։ Նայած ժողովրդի տրամադրութեան, (ոչ բէգերի) համարձակ կարելի է ասել, որ եթէ չը լինեն Սուրմալուում Սուլթանաբաթի Բահրամբէգօվները, որոնք ամեն ունեցածները վատնել են և զուրկ են ապրուստի միջոցից, ոչ մի ընդհարում տեղի չի ունենայ։ Ապացոյց դրան, անցեալ օրը բոլոր գիւղերից եկել էին Թուրքերը պ. գաւառապետի մօտ, աղերսում էին ասելով. ի սէր Աստուծոյ, ազատեցէք մեզ այս անտանելի դրութիւնից և ամբողջ դրէք կանոնաւորելու մեր նախկին հարաբերութիւնը. այդ իսուն դրութիւնը և անվստահութիւնն է, որ մօտ քան օր չրի երես չենք տեսել. չորացան մեր ցանքսերը, կոտրվեցին մեր անասունները, իսկ մենք եօա ենք գնում ջրհորի դառնալի ջրով։ Գաւառապետ Իսանին խոստացաւ կատարել գիւղացիների պահանջները, միայն թէ իրանք հանգիստ լինեն և ժամանակ ու միջոց տան և մանաւանդ իրանք ևս աջակցեն և մեղաւորին յանձնեն. գաւառապետը հրամայեց, որ մեզ օրը բանտ գնան, իսկ ինքը կօգակներով կը գայ Արաքս։

Պ. գաւառապետը իր խոստումը կատարեց. հետևեալ օրը կօգակներ և երկու հայ և երկու Թուրք վերցրած իր հետ, իբրև կանաչներին ծանօթ, որ ինքը չը խաբվի, ճանապարհվեց դէպի Արաքս։ Մտաւ Իսայիլ բէգ Սուլթանովի հետ բանդը. կանոնաւորելուց յետոյ յետ է դառնում Դասուզան և Դուլզիդիդ Թուրք գիւղերը, որոնք մի չարիք են դառել սկսած նախկին միրաւի օրից մինչև այժմ, անարգել օգտվելով Իզմիրմաղ և Բհարլու հայ գիւղերի առուներից. բոլոր ապօրինի ջուր բանողներին բռնեց ծեծեց և տուգանքի ենթարկեց, իսկ շատերը փախան, բայց գաւառապետը մտաւ տները, դուրս բերեց կապերները և անասունները, ուղարկեց ռատիկանատուն, մինչև տէրերի գալը, իսկ եթէ չը գան, պէտք է ծախէ տուգանքի տեղը։ Այս անգամ ևս գաւառապետի տեղը Իզմիրից ազատվեց Մաշադի Ահմադ Թուրդօղլին գարմանալի է, այս երրորդ անգամն է փախչում այս ջանքէզար լոթին, թէ ինչու չեն բռնում, չենք հասկանում։

Շնորհիւ պ. գաւառապետ Իսանի, այժմ կանոնաւոր ջուր ունեն Սուրմալուի բոլոր գիւղերը։ Համարեա ամեն օր գաւառապետը բանդ է գնում և 8 կօգակ շրջում են առուների վրա. գիւղացիները՝ հայ և Թուրք՝ սկսել են իրանց կանոնաւոր գաշտային աշխատանքը։ Զօրքը շրջում է գիւղերը թնդանօթներով։

Երէկ Մալաքլուից կօգակները անցնելիս նկատում են մի քանի Թուրքերի, որոնք երևի գարան էին մտել և ասում էին յարմար ժամանակի յարձակվելու Բհարլույ քաղհանաւորների վրա։ Կօգակները ուզում են ձերբակալել նրանց, բայց Թուրք ջանրեգարները չեն ուզում անձնատուր լինել կօգակներին. նրանցից մէկը երկու անգամ հրացան է արձակում կօգակի վրա, բայց չէ կպչում, իսկ կօգակի գնդակը սեղն ու տեղը սպանում է ջանրէկարին։ Կօգակները վերցնում են զարխալը հրացանը և փամփուշտակալը. այդ սպանվողը յայտնի աքսոր սկսն Զաւիլի եղբօր որդին է։

Ամսիս 2-ից Թուրքերից շատերը խանութները թողել և հեռացել էին, բայց ի զարմանս Թուրքերի այժմ տեսնում են որ մի մարդ անգամ չէ պակասել (Թուրքերը այժմ գալիս են բաղչ.), բայց աբի տես Թուրքի մեծահոգութիւնը. մի Թուրք արհեստաւոր բողոքեց, որ իր արհեստանոցը կողոպտված է։ Ոստիկան Պալնիկովի քննութիւնը ցոյց տուեց, որ ոչ թէ գողացված է, այլ Թուրքի շատ էշ, ապրանքը գտնվում է ուրիշ Թուրքի խանութ, որը ինքն է պարել և դրա համար Թուրքը այժմ նստած է բանտում։ Այդ Թուրքը 800 ռուբլու գանգատ էր ներկայացրել։

Եաշի և Օբայ միացեալ յարձակվողներին, որոնց կօգակները բռնել էին և որոնցից մէկն էր Շամշադինով իր խմբով, արձակեցին բանտից։

Ինչպէս լսում է, քրդերը թրանց սպանվածների արիւնը պահանջում են հայցեցիներից. երևի խնդրերին մեծ թանկի յոյսով բերել էին, իսկ այժմ արիւն են պահանջում։ Տեսնենք ինչ կը լինի վերջը։

Եղիզ

—

Եւլախ կայարանից գրում են «Кавк.»-ին, որ յունիսի 15-ին, երեկոյեան, Եւլախից 5 վերստ հեռու ութ հոգի եռաձեան հրացաններով զինված Թուրք փախստականներ Գանձակի գաւառից, յարձակվեցին ճանապարհորդներով գնացող հակակառքի վրա։ Զարշապինսկի պահակատան ուաղ պահակ Բրիչիօն Սաատինովի պահակատնից օգնութեան հասնող հինգ պահակների օգնութեամբ յարձակումը յետ մղեց և հետևեց նրանց չորս վերստ տարածութեան վրա, որից յետոյ մութը ընկնելով վերադարձան։ Հրացանաձգութեան ժամանակ պահակները խլեցին աւազակներից մի ձի։

Զիլմանշլրի գաւառի Սէիդէնի հասարակութեան գանգատը Շիրին-բայրամ օղլին, մօտաւորապէս երեկոյեան ժամի 8-ին, իր սուրհանդակ Ալլահվերդի Հաջի-Մամեդ օղլու հետ ծառայութեան գործերով գնաց Ղարադաղի գիւղը։ Դեռ չը հասած գիւղին, տանուտէրը նկատեց 30 ձիաւորներ ոստիկանական սպիտակ պաշտօնագգեստներով և ենթադրեց որ նրանք պահակներ պէտք է լինեն, բայց երբ մօտեցան, նա նրանց մէջ ճանաչեց յայտնի աւազակներ Ակերքան-Քերբալայ-Սաադը-օղլուն, Մաստան Ալի-Մուրադ օղլուն, Շամսալի-Ալի-օղլուն, Սիբիրից փախստական Հասան-բէգ Բուստամբէգօվին և Իսմայիլ-բէգին։ Աւազակները խլելով տանուտէրից հրացանը, փամփշտակալը, 200 ռուբլի փող՝ արծաթէ գօտին և ժամացոյցը, իսկ սուրհանդակից հրացանը հեռացան։

—

Շուշի։ Յունիսի 13-ին, առաւօտեան ժամի 10-ին Խանքենդ աւանի բնակիչներ Ա. Զհանգիրեան և Ս. Միրզոյեան Շուշուց Ղայբալիքենդի վրայով երկաթիւղ վրա բարձած ալիւր էին տանում Խանքենդի։ Ճանապարհին նրանց վրա յարձակվեցին Շուշում ապրող Ղայբալիքենդ գիւղացի Սալիմ Ջաբրայիլ օղլին, Ռասուլ օղլին և Ռահիմ-Զհանգիր օղլին, որոնց անունները յիշեց մահացու կերպով վիրաւորված Զհանգիրօվը։ Միրզոյէվին գերի են տարել։ Այդ միևնոյն օրը Շուշու քաղաքի Երևանեան դարպասների մօտ Ղարաբուլաղ կոչված տեղում անյայտ Թուրքերի ձեռքով սպանված է Մնացական Յարութիւնեանցը։ «К»

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԵԱՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

Մայր Աթոռ ս. Էջմիածնի միաբաններից

Ամենախոնարհ խնդիր

Ձերդ Վեհափառութեան անցեալ մայիսի 10-ի պատուական կոնդակը, որով հաճեցիք վերականգնել Հայոց սահակեան ս. եկեղեցոյ ուսումնական հօտի իրաւունքները, ընտրելու եկեղեցական բոլոր պաշտօնեաները, Մայր Աթոռի միաբանութեան համար անակնկալ էր և որչափ ցանկալի բոլորին իր ազնիւ գաղափարով՝ ձեռակերպութեան և հրատարակութեան եղանակի տեսակէտից շատերին շփոթութիւն է պատճառում։ Երբ որ առաջին անգամ հանդիսաւոր կերպով ուսնական բպսմութեան մէջ յայտնեցին մեզ նորա բովանդակութիւնը, ըստ ամենայնի ախորժ զգացմունքներով չը լցուեցան յիրաւի միաբաններից շատերի սիրտը, որովհետև ինչպէս մի հեռու տեղից եկած օտար էինք զգում մեզ հանդիսի մէջ և իւրաքանչիւրն իր ընկերին հարցնում էր. ինչու այսպէս եղաւ, ինչու այսպիսի կարևոր գործ և եկեղեցոյ վարչութեան կարգերի մէջ մտցրած հիմնական փոփոխութիւն չէր կատար լում գիտութեամբ և խորհրդով այն միաբանութեան, որ Հայրապետական Աթոռի շուրջն է, հայրենի կարգերի բուն աւանդապահը, և որից եկուսէ են Հայաստանեայց ս. եկեղեցոյ ամեն աստիճանի պաշտօնեաները։ Մինչ այսպիսով պէտք է արդարացուին նոցա խօսքերը, որոնք հոգևորականին և ժողովրդեան առանձին առանձին շատ և նպատակ են վերագրում, այնպէս են ցոյց տալիս, որ իբր նոքա ինչ ինչ երևակայական իրաւունքների համար մշտական կռուի մէջ են միմեանց դէմ, գուցէ և նեղիչ դէպքում կարծէին, թէ հոգևորականները կաշխատեն խափանել այս ձեռնարկութիւնը, որ նոցա ինքնանոր տնտեսեան համաձայն պէտք է անհանոյ լինէր հոգևորականութեան, իբրև նոքա իրաւունքները սահմանափակող յօգուտ ժողովրդի։ Մինչ այժմեան միաբանութիւնը հարազատ ժամանակը չէ այն երջանկի նախնիներ, որոնք դարերի ընթացքում իրանց անձը դրել են իրենց ժողովրդեան համար, նոքա հետ նեղութիւն, հալածանք, նախատինք, մինչև իսկ շատ անգամ մահ կրել, և ոչ երբէք ժողովրդից դուրս մի սեփական բարիք և ապահովութեան ետեղ ընկել։ Մինչ նեղիչ միաբանութիւնն այնքան ընկած և արհամարհելի եղաւ, որ նոքա խղճալի գոյութիւնն անգամ չէ նկատվում։ Մինչ այնքան խորթացաւ իր կոչումից և ազգութեան մէջ ընկաւ, որ մի խորհուրդ անգամ չէր կարող տալ այն խնդրում, որ իր անդամների ապագայ վիճակն էր կարգադրում։ Այս ամենը մտածելով և մի և նոյն ժամանակ ինքներս մեզ կշտամբելով, թէ գուցէ չիրաւի մեր ապաշնորհութեան երեսից ենք այսպիսի անուշադրութեան արժանացել. մտածելով, թէ ներկայ գործը սկզբունքով յամենայն դէպս բարի է, իբրև մի մեծ Հայրապետի և ընդհանուր Հայոց Հայրապետի կարգադրութիւն, որի պաշտօնական պատկառանքով խոնարհել պարտական ենք, միամտութեանք և յոյս ունէինք, որ առաջը դրած նպատակը իրականացնելու միջոցին բոլոր կարգադրութիւններն ու գործողութիւնները ուշի ուշով քննութեան կանուին և հոգ կը տարուի համաձայնեցնելու մեր նախնեաց կաթգերի հետ, վերականգնելու իրաւ եկեղեցական պաշտօնեաների ընտրութեան նախկին եղանակը և քրիստոնէական ազգային եկեղեցոյ հարազատ ծնանդ եղող մի վարչական կազմ հաստատելու։

Բայց երբ Ձերդ Վեհափառութեան յունիս 7-ի նոր կոնդակը լոյս տեսաւ, իբրև հրանդ կենդրոնական ժողովի ընտրութեան համար, և հրապարակի վրա այնպիսի բացատրութիւններ ընդունուց, որոնք զանազան երկմտութիւնների տեղիք են տալիս, անպատեհ ենք համարում այլևս լռելը և մեզ թուում է թէ դիակաման մի մարմին կլինէինք և այս Մեծ Աթոռի, Ձերդ Վեհափառութեան, մեր հոգևոր կոչման, այո, նոյնիսկ հայ ժողովրդեան առաջ պարտական կը գտնուէինք, եթէ չը համարձակուէինք մեր մէջ այս առթիւ զարթած տարակոյսները Ձերդ ս. Օծութեան ներկայացնել։ Մի կողմ ենք թողնում Հրահանգի այնպիսի անհարթութիւնները, ինչպես, օրինակ, որ Աղէքսանդրապոլի վիճակից 7 պատգամաւոր է պահանջուում, իսկ Բեսարաբիոյ թեմից միայն մէկ, իբրև թէ Աղէքսանդրապոլի վիճակում 7 անգամ աւելի հայ ընակիչներ կան, քան ամբողջ Բեսարաբիոյ թեմում և կամ Շիրակի գիւղացիներն աւելի իրաւունք ունեն և աւելի ձեռնասութիւն Հայոց եկեղեցւոյ վիճակը տնօրինելու, քան մայրաքաղաքների բնակիչներն ու Խրիմի երախտաւոր գաղթականների ներկայ սերունդը։ Թողնում ենք նաև ընտրութեան եղանակի այնպիսի ձևակերպութիւնը, որով այդ կենսաբնական համազգային և Ռուսահայոց բոլոր եկեղեցական գործերի կարգադրիչ և անօրէն համարուած ժողովը կարող է կազմուած լինել ընտրեալներից, որոնք ունեն ռուսիայեան հայ ժողովրդեան ձայների մի հարիւրերորդ մասը միայն։ այլ ամենից աւելի նրա վրա ենք զարմացել և տարակոյսների մէջ ընկել, թէ այդ տեսակ ամենաշնչարձակ իրաւունքներ եկեղեցական գործեր կարգադրելու թոյլ են տրուում մի ժողովի, որի մէջ Հրահանգի համաձայն կարող է պատահել, որ ոչ մի եկեղեցական անձն չը լինի։ Այսպէս պէտք է ուրեմն վերահաստատուին մեր կանոնական աւանդութիւնները։ Գիտենք յիրաւի, որ երբ մեր երանելի թարգմանիչները ժողով գումարեցին Շահապիվանում, և Արտաշատում նոցա հետ էին նաև Հայոց աստուածաբեր նախարարները, նոցա հետ նախանձախնդրելու և հաստատելու ս. Գրիգորի և Ներսէսի, Սահակի և Մաշտոցի դրած կարգը, նոցա հետ վառուած Քրիստոսի սիրով, անօրէն թշնամուն դիմադրելու համար։ Գիտենք, որ հայ եկեղեցականներն ու իշխանները նոյն կերպ միաբան գումարեցին Բարգէն և Ներսէս Բ. կաթողիկոսների օրով և յաջորդ դարերում եղած բոլոր ազգային-եկեղեցական ժողովները՝ հայրենի կարգերն ու դաւանութիւնը պաշտպանելու համար օտարի ոտնձգութիւնների և աղանդաւոր մոլորութիւնների դէմ։ Գիտենք, որ երբ Կիլիկիոյ օտարասէր թագաւորներն ու կաթողիկոսները մեր ս. եկեղեցւոյ հարազատ աւանդութիւնները ազատելու ետևից էին՝ այն ազդարար թղթին, որ ուղղեց նոքանց արքունի սեղանի և բարձանպատ Սիւնեաց Տէր-Ստեփանոս արքեպիսկոպոսը, եկեղեցւոյ ուրիշ եպիսկոպոսների և վարդապետների հետ ստորագրեցին նաև Սիւնեաց քաջարի իշխանները, որ երբ մի քանի հայ վարդապետներ անօրէնին ետևից գնալով, աննկուն ոգւով և անձնուէր հաւատարմութեամբ հրապարակ եկան՝ հրաւիրում էին գալ, միաբան աշխատութեամբ շինել վերստին Լուսոյ ս. Եկեղեցին, Հայոց ընդհանրական Հայրապետութեան Աթոռը իր նախկին Մխիթարէ տեղում հաստատել, նոցա օգնում, գործակցում և նոյն եռանդով լցուած էին Հայոց վառաբաստ ազգի Մեցորդների իշխաններն ու մէլիքները։ Գիտենք, այո, որ մինչև այս վերջին ժամանակներն էլ Հայոց հայրապետական ու բոլոր առոյգաստ եկեղեցական վարչութիւնները ոչ մի կարևոր եկեղեցոյ և ամբողջ ժողովրդի բարւոյն վերաբերեալ գործ չէին ձեռնարկել առանց ժողովրդի աչքի ընկնող և հասկացող ներկայացուցիչների խորհրդին և աջակցութեան։ Ուստի և խիստ զեղցիկ ու փափաքելի ենք համարում այն, որ քանի ներկայ ժամանակս միջոց է տալիս մայրենի եկեղեցւոյ յառաջադիմութեան հոգսի մէջ ժամանակից լինեն ոչ միայն իշխանները ու առաջնորդները, այլ ամբողջ հօտը, և որ հաստատուն ճշմարիտ հաւատարութեան այն սիզբունքի, որով Քրիստոս բոլորին հաւասար է զարձրել յետին ռամիկն ու գիւղացին անդամ եկեղեցին իր սեփական տուն համարել և պարքի ու իրաւունքի կրկնակի կապերով նրա կոզմէ հետ կապուած լինին։ Սակայն մի ժոգով կազմուած բացառապէս աշխարհական անձերից, որ եկեն ամեն տեսակ եկեղեցական գործեր քննեն, վճիռներ տան և նոցա վճիռները բացարձակ ու անդառնալի լինեն, այնպէս որ բոլոր եկեղեցական անձինք ու հաստատութիւնները՝ ամենայն Հայոց Հայրապետից սկսած մինչև վերջին ժամկոչը, պարտաւորուեն նրանց անպայման հնազանդել, բոլորովին նոր բան է և չափազանց զարմանալի բան, որ ոչ մեր ազգի և եկեղեցւոյ մէջ է եղել երբ և իցէ, ոչ էլ աշխարհիս երեսին որ և է ուրիշ տեղ։ սկսած Քրիստոսի եկեղեցւոյ հաստատութեան օրից։ Եւ մթթէ հնարաւոր է, որ այդպիսի բան լինի։ Մթթէ մի մարդու մտքից կանցնի այդպիսի բան աշխարհական հաստատութիւնների շրջանում գլուխ բերել։ Եւ ինչու։ այս տեսակ փորձութիւնները հայոց բազմադարեան, բազմաչարչար եկեղեցւոյ գլուխը պէտք է դան։ Ամ օգուտն է արդեօք այդ պահանջում և ինչ տիպական պահանջներ կան դորա համար։ Ինչու եկեղեցական գործերի անմոռաց աշխարհական անձինք միայն պէտք է եկեղեցւոյ վիճակը տնօրինեն, իսկ ամբողջ հոգևորականութիւնը մեջ են, ինչպէս կարող էր այդ ազգերի թշնամութիւնը չը վնասել նրանցից իւրաքանչիւրին։

Թուրքերի համար, որոնք շատ տեղ գործիք էին դարձել գաւառրութեան ձեռքին և նախայարձակում էին գործել հայերի վրա, շատ շուտով պարզվեց, որ իրանց արածը մի չափազանց սխալ քայլ է, որովհետև նրանց մի խոշոր մասը դեռ քոչուորական անգեսութիւն ունի և բանտված է անցնել հայ գիւղերի շրջաններով դէպի ամարային կամ ձմերային արօտները։

Քոչերը մեր երկրում չէ կարող շրջումներից ազատ լինել և ահա նա զգաց թէ ինչ դժոխքի մէջ է նա ընկել հայ-Թուրքական ընդհարումների պատճառով։

III

Մեր երկրի շատ

գեղարվեստական զարգացումը զուրս քշուի և մինչև անգամ իրաւունք չունենայ իւր կարծիքը յայտնելու այնպիսի գործերի մասին, որոնք իւր ձեռքով պէտք է կատարուին և որոնց համար նա պէտք է պատասխանատու մնայ Աստուծոյ, ժողովրդի և պետութեան առաջ։ Այս տեսակ ձեռնարկութիւն ոչ առողջ դատողութեան համար է հասկանալի և ոչ էլ եկեղեցւոյ կանոնական իրաւունքի ու տիրող պետական օրէնքի համաձայն իրագործելի։ Նա որ Առաքեալների ու Մեծ Լուսաւորչի Աթոռի վրա բազմած, որ հոգեւորական ընտրութեան և քահանայապետական օծման շնորհիւ յանձին իւր ներկայացնում է ի մի եկեղեցի ձուլուած հայութեան գաղափարական միութիւնը և այդ պատճառով Ամենայն Հայոց Հայրապետ կոչվում՝ թէ՞նչպես կարող է եկեղեցական գործերում աշխարհական անձերից քաղկացած մի մասնաւոր ժողովի ենթարկուել. կամ եկեղեցւոյ եպիսկոպոսները, որոնք իրենց առաքելական կոչմամբ հոգի տեսուչ են կարգուած և աստուծոյ ճշմարտութեան վարդապետներ՝ ինչու պէտք է իրենց յատուկ եկեղեցական գործունութեան մէջ հրահանգներ ընդունեն այնպիսի անձերից, որոնք ոչ հոգեւոր ատիճան ունեն և ոչ հոգեւոր գաւառութիւն։ Այդպէս և, քանի որ պետական օրէնքը Հայրապետին է ճանաչում գլուխ և բացարձակ անօրէն Հայոց եկեղեցւոյ բոլոր հոգեւոր գործերի համար, իսկ Ս. Էջմիածնի սինոդից իւր սրբազնարան նախագահի հետ Երբեւ Ռուսաստանի սահմաններում եկեղեցւոյ բոլոր մնոտական և վարչական գործերը կարգադրող բարձրագոյն ատեան, թէ՞նչպես կարող է ուրեմն յանկարծ մի ուրիշ ժողով հանդէս գալ, որ թէ Հայրապետից և թէ Սինոդից բարձր կանգնած լինի և Հայրապետը ներկայացնայ իբրև պաշտօնական միջնորդ միայն Կայսեր և կենդրոնական ժողովի մէջ, իսկ Սինոդը լինի նոյն ժողովի ստորադիր, հրամանատար և գործադիր հաստատութիւն միայն։ Զէ՞ որ, եթէ Սինոդը մի «բիւրոկրատիկ» և ոչ ժողովրդական հաստատութիւն է, առաջ պէտք էր հոգս տանել, օրինական ճանապարհով այդ և գրա նման ոչ ժողովրդական հաստատութիւնները վերացնելու և այնպիսիներ հաստատելու, որոնք ժողովրդական լինէին և համապատասխան Հայոց եկեղեցւոյ ոգուն և կանոնական կարգերին։ պէտք է Հայոց եկեղեցւոյ վարչութեան համար մի ամբողջական սահմանադրութիւն և նոր կանոններ կազմել պետութիւնը ճանաչել տալ և ապա թէ հարց լինէր՝ ո՞րն է բարձրագոյն և ո՞րը ստորադաս հաստատութիւնը։ Հակառակ դէպքում, եթէ պետութիւնը այս մէկին է ճանաչում իբրև բարձրագոյն հաստատութիւն, իսկ ժողովրդը այն միւսը, թէ՞նչպես պէտք է յարմարեցնեն նոքա միմեանց իրենց գործունութիւնները. եթէ օրինակ կենդրոնական ժողովը մի Սինոդի անդամի կամ մի առաջնորդի պաշտօնից արձակում է, իսկ պետութիւնը (իմանալով, ի հարկէ, թէ նախաձեռնութիւնը ո՞ր տեղից է) չի կամենում արձակել, ընտրում է մէկին, իսկ պետութիւնը չի հաստատում, ինչ կլինի այդ դէպքում ընտրածի կամ արձակուածի՝ նոցա վարած գործերի վիճակը։ Ինչպիսի շփոթութիւններ և խանգարումներ յառաջ չեն գայ այս տեսակ երկդիմի կացութիւնից։ Վերջապէս ընդունենք թէ այս բոլոր առարկութիւններն անզօր են լինում և կենտրոնական ժողովը յիշեալ բացարձակ իրաւասութիւններով ու սոցա գործադրութեան հետեանքներով մէկտեղ գլուխ է գալիս։ այդ դէպքում հայ հոգեւորականութեան ամբողջ դասը իրաւազրկութեան ու սարկական խոնարհութեամբ ո՞ր ատիճանին պէտք է հասնի, և այնուհետև ո՞ր անպէտք ու անպատիւ հայը կյսժարի աշխարը թողնել և անդամ գրուել մի այսպիսի արհամարհուած դասակարգի։ Այլ ևս Քրիստոսին ծառայելու ի՞նչ հնարաւորութիւն այնպիսի վիճակի մէջ, որտեղ տէր ու հրամայող մարդիկ են միայն և կեանքի ու պաշտօնավարութեան բոլոր պայմանները կախուած են աշխարհական մարդոց հաճոյքից, մինչ եկեղեցւոյ բարձրագոյն պաշտօնեան անդամ հլու հնազանդ պէտք է լինի այնպիսիների անօրէնութեան, որոնց մէջ կարելի է ոչ եկեղեցական հոգի կայ, ոչ գիտութիւն։ Ուստի է թէ նոյնիսկ եկեղեցւոյ այժմեան ոտնաթաղ պաշտօնեաների համար աւելի լաւ է ամեն բանից հրաժարվել և ճակատի քրտինքով կերած հացը վաստակելու մի ուրիշ ճանապարհ գտնել քան թէ այսպիսի ստորացուցիչ պայմանների մէջ մնալ և հակառակ կռնման, հակառակ պատուի զգացման ու հակառակ խղճմտանքի գործել։

Արդ, Վեհափառ Տէր, ներկայացնելով վերոգրեալները ի բարեհաճացութիւն Ձերդ Սրբութեան, անհնարելի ազիսում ենք, այսպիսի մի սանանեալ ժամանակ, երբ զերծից արհաւիրք և ներսից զանազան խռովութիւններ են պարարել մեզ, տեղ չտալ կնձռտ խնդիրներ յուսալու և հայրենի ցանկը խրամատելու։ մի գուցէ Տիրոջ այդին անցաւորներին ոտի տակ ընկնի և օտարները քաղեն նորա պտուղը։ այլ եթէ եկեղեցւոյ վարչական և ուրիշ կարգերի մէջ զանազան բարենորոգումների և բարիփոխութիւնների կարիք կայ, կարելի էր եկեղեցական ու աշխարհական գիտակ անձերից յանձնախումբեր կազմել, պատուիրել, որ այդպիսի խնդիրներ ուսումնասիրեն և քննեն, բարեփոխութիւնների նախագիծներ պատրաստեն և յետոյ, երբ աւելի յարմար և խաղաղ օրեր կը գան՝ ընդհանուր ազգային-եկեղեցական ժողով գումարել, թէ՞նչպես անցեալ գարերի ժողովներն են եղել, բոլոր Տաճկաստանում, Պարսկաստանում և աշխարհի զանազան կողմերում ապրող հայերի մասնակցութեամբ,— որովհետև Հայոց եկեղեցին մէկ է, և ամեն մի կարգ, որ նորա մի բաժնում սահմանուում է, պէտք է յարմարուի ուրիշ բաժինների կարգերին,—և ահա այդպիսի կանոնական ժողովի մէջ վերաքննուեն յիշեալ նախագիծներն և պատշաճ եղածը կարգադրուի։ Ինչ վերաբերում է այն ժողովին, որ պէտք է առաջիկայ օգոստոս ամսի 15-ին գումարուի, եթէ նա անյետաձգելի և խիստ կարևոր է համարուում կը խնդրէինք նախ, որ Ձերդ Սրբութիւնը բարեհաճէր պատուական կոնդակով հրամայել Մ. Աթոռի միաբանութեան, իւր ձեռնհասանդամներից մի քանիսին ընտրել, և միաժամանակ պատուիրել պատուիրակներին, ժողովին բերն որոշեցուով ուրիշ եկեղեցականների ընտրել, և ապա բոլորը մասնակցէին ու գործակցէին կենտրոնական ժողովին։ երկրորդ՝ յանձնել այդ ժողովին քննելու միայն ծխական գրաբարոյների համար պատրաստուած նախագիծը, խորհրդակցելու Մ. Աթոռի ճեմարանի և թեմական զպրանոցների վիճակի ու ծրագրի մասին և անելու այնպիսի կարգադրութիւններ, որոնք մի մասնաւոր և յանձնարարակատար ժողովի իրաւասութեան սահմանից չեն ելնում։

1) Սուքիաս արքեպիսկոպոս, 2) Գէորգ արքեպիսկոպոս, 3) Արիստակէս արքեպիսկոպոս Գաթեան, 4) Յովհաննէս եպիսկոպոս, 5) Ղեւոնդ եպիսկոպոս, 6) Նահապետ եպիսկոպոս, 7) Եսայի վարդապետ, 8) Համազասպ վարդապետ, 9) Գրիգորիս վարդապետ, 10) Եղիա վարդապետ, 11) Անտոն վարդապետ, 12) Գեղամ վարդապետ, 13) Սահակ վարդապետ, 14) Կարապետ վարդապետ։

15 յունիսի 1906

Ս. Էջմիածին.

ԳԱՆՁԱԿԻ ՇՐՋԱԿԱՅԵՐՈՒՄ

Յունիսի 18-ին

Իր ժամանակին ձեզ գրած եմ Բրաջուր գիւղից տարված 104 ուչարների մասին. ուչխարները թուրքերը բերել են քաղաքս Բաղմանար թաղը—այդ «պատմական» ատագաստին որը։

Գրած եմ նախկին, որ երկու ամիս առաջ գներ.-նահ. կողմից կարգադրութիւն էր եղած—առնել բազմանարեցիներից ուչխարների արժէքը և տալ բրաջրեցիներին։ Հրամանի կատարումն այնքան ժամանակ ձգձգեցին ստորադրեալ պաշտօնեաները և ուշացրին, որ թուրքերը գիմեցին ձեզ արդէն յայտնի վերին ատեանին անմեղի և ստոր դատապրտիան—բրաջրեցիների պահանջին խոչընդոտ լինելու և հավաքեմ ստեղծելու համար։ Թուֆալ-հասանլուսեցիք սկսում են իրանց ճմեանոցում գիշեր ժամանակ մի քանի անգամ համագրի կրակ բանալ, զրանով լսեցնելու մասայ կօլսնիայում ապրող գաւառաց երիտասարդ մասի պրիտաստին և կալվածների գնին, ապա գալիս են իշխանութիւնը գանգատվում են թէ հայերը այս գիշեր եկել քշել տարել են Բրաջրի ագրաբիմը իրանց ուչխարի հոտը։ Իշխանութիւնը լուրն առնելուն պես, չը գնանք գաւառական պրիտաստի փոխարէն Ղրաջուր է ուղարկում մի քանի թուրքերի և կօզակների հետ տեսչական և յայտնի հայակեր, այն ժամանակվայ Բաղմանար թաղի պրիտաստի պաշտօնական Վլադիմիր Կոստոպսկին։ Թէև ի հարկէ, այդ դատարութիւնը բացվեց և թուրքերին չաջողվեց ապացուցանելու մեղադրամն անմեղ բրաջրեցիների յանցաւորութիւնը, սակայն բրաջրեցիք իրանց չը գործած յանցանքների համար անլուր տանջանքների և զրկանքների ենթարկվեցին հերոս Կոստոպսկու կողմից...

Երբ թուրքերի այդ պահանջի անհեթեթութիւնը երևան եկաւ և պարզվեց, որ այդ դէպքը թուրքերի կողմից սարքված պրովոկացիա է, ներկայումս նոր իշխանութիւնը նորից հրամայել է ոստիկանապետին ուսել բազմանարեցիներից 500 բուրլի յօգուտ Բրաջուր գիւղացի ուչխարաբերիս։

Գրել եմ նաև Բանանցից ոչ այնքան հեռու Բալեան ընտանիքի գազանաբար ապտուութեան և նախիրը տանելու մասին։ Այն ժամանակվայ խուզարկութիւնից պարզվեց, որ այս տաւարը ևս բերել են Բաղմանար թաղը... Հետևաբար պարզվում է, որ չարագործներն ևս բաժան լարցի Ալեքէրի գիւղերն են...

Այսօր, ինչպէս հաստատ աղբիւրից իմացայ, գեներալ-նահանգ. Ալիխանը հրամայել է քաղաքիս ոստիկանապետին բազմանարեցիներից առնել 500 ր. տուգանք Բալեանի որբերի և այրիների օգտին։

Գրել եմ նաև բանանցեցի Աւետիսեանի վրա յարձակվելու և վիրաւորելու մասին։

Պարզվել է, որ յանցաւորները բանանցու հարևան և սահմանակից մօլլահասանլուսեցի թուրքեր են։ Գեներ.-նահ. Ալիխանը հրամայել է այդ գիւղում եկեղեցական նշանակէր։

Ամսիս 16-ին Զովգասում սպանված Մխիթարեանի երկու պատանիների պատճառով որոնց սպանել և գլուխը կարել հեռուները տարել էին, յանցաւոր ճանաչված Բալշաբլու գիւղի վրա 600 ր. տուգանք է դրված յօգուտ պատանիների ծնողների։ Բանանցի և Զովգանին սահմանակից երկու թուրք կռուա քաղաքների սպանութիւնը վերագրում են հարևան Բանանցին, այդ պատճառով Բանանցում եկեղեցական է դրված մինչև գիւղացիք կը վճարեն 300 ր. տուգանքը։

Գաւառապետի հետ ունեցած խօսակցութիւնից երևաց, որ իշխանութիւնն որոշել է իւրաքանչիւր գիւղի կամ քաղաքի շրջանում կատարված սպանութիւնների համար պատասխանատու ճանաչել կասկածի տակ գտնվող շրջակայ գիւղերը, և նրանք տուգանքի կենթարկվեն յօգուտ սպանվածների։

Մնում է պատժել չորսուսեցի մի գիւղացու սպանող Աղեօխուլլու անհնազանդ գիւղացիներին, որոնք անցեալներում սպանեցին մի չորսաեցու, ջուր խմելիս և որի ընկերները ճանաչել են բոլոր յանցաւորներին։

Անշուշտ պէտք է պատժվեն նաև Բանանցի հարևան եալ զբաղեցեցիք, որոնք մայիսի 15-ին գնդակաձիգ արին Բանանցի այգիներում պահապան Զաքարը Շահմուրադեանին, սանելով նաև նրա զէնքերը։

Ինչպէս հաստատ աղբիւրից լսեցիք, իշխանութիւնը բոլոր գիւղերում մասգրութիւն ունի զինված ինքնապաշտպանութեան խմբակներ պատրաստել։ Իշխանութեան կողմից նշանակված սարժենիկի հսկողութեան տակ։ Այս մարդով հայ գիւղացիք առաջներում մի քանի անգամ դիմումներ են արել իշխանութեանը։

Ա.ւ. Սահակեան

Յ. Գ. Այս բոպէիս լուր բերին, որ զերմանացի հումքի այգում նրկու կերանցեցի, գեանեանները չբերու ժամանակ, թուրքերը նրանցից Մանուչարեանին գնդակահար են անում և ձեռքի մի մասը կտրում տանում։

Մի ս ընկերը գնդակի տարափի տակ փախչում է Կօլսնիան և իմաց տալիս։

Նոյն

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Կուրակից «Страна»-ին հեռագրում են. Յունիսի 13-ին, գիշերը, զինուորական հրանգանցի պարիզում կայացաւ բազմամարդ ները ժողովրդի խուռն բազմութեան հետ միասին, որին, շնչելով զինուորական վարչութեան ձեռք առած խիստ միջոցներին, մասնակցում էին արտիլլերիստներ և կազակներ զինուորներ։ Միասնիզին մասնակցողներին օգակ կացած պահում էին զինուորները, որոնք պատրաստ էին պաշտպանելու նրանց կազակների և ոստիկանութեան յարձակումների դէմ։ Ճառախօսներ եղան զինուորներից նոյնպես, որոնք, պախարակելով կառավարութեանը, պարտաստանութիւն էին յայտնում տառապող ժողովրդի կողմը անցնելու։ Ոստիկանութիւնը բացակայում էր։ Կանչվել են զօրեան կազակներ, որովհետև տեղական զօրքերը վատահութիւն չեն ներշնչում։

—Օսվոյից յուն. 11-ին հաղորդում են «Воен. Гон» ին. Երեք օր առաջ գիշերը արտիլլերիստները քարեր նետեցին բանակատեղիում օֆիցերի վրա։ Անկարգութիւնների պատճառը այն է, որ վաշտերից մէկին չեն տուել իր վաստակած գումարը և բերդային արտիլլերայի տարեկան պիտոյքները։ Բայի գրանից վաշտերից մէկը յայտնել է, որ իրանց հարազատներին կօզակները նեղացնում են գիւղերում։ Բէլօստոկ գնացող հետակ զօրքի վաշտին արտիլլերիստները սուլոցի ենթարկեցին։ Արտիլլերիստները հայտնում են կօզակների զինվայում պատկախմբերին։ Իրանց օֆիցերներից մէկին նրանք արդէն ծեծել են փայտով։ Սապերներն էլ են յուզվում։ Գիշերները բանակատեղիում միտինգներ են տեղի ունենում, բայց, ինչպես նկատվում է, շարժումը մեղմանում է, որովհետև արտիլլերիայի 2-րդ բատալիոնի տարած կէսին բայարձակ կերպով ապստամբվելու՝ միւս զօրքերը հրաժարվեցին գալ իրանց վրաններից։ Այդ ամենը տեղի ունեցաւ յունիսի 9-ին, երեկոյեան։ Դատարանը գալու է յետոյ։

—Տուլայից հեռագր. են XX Եկ.-ին. Ագրարական շարժումը նահանգում անօրինակ չափեր է ստանում։ Ամենից ստատիկ սկսված են 6 գաւառներում։ Նահանգապետը անընդհատ հեռագրերեր է ստանում, որով զօրք են պահանջում, որոնք չը նայելով հոգած երկու գունդերին այնուամենայնիւ չեն բաւականացնում։ Նահանգապետը խնդրել է Մոսկվայից մի հեծելագունդ։ Նրան մերժել են։ Նահանգապետը գիւղացում է ասացել, որ եպիսկոպի գաւառի գիւղացիները միացած ահագին բազմութեամբ քաղաքի վրա են գնում, ճանապարհին հեռացներով գործից կալուածատէրերի մօտ եղած բոլոր ծառայողներին, նոյն իսկ լակէյներին։ Նրանց մուտքը քաղաք պրպտելու համար Տուլայից ուղարկել են հեռակների երկու վաշտ։ Հարված գրաւումները Բօլօրոգեցիի գաւառում, Ամիրնովի կալուածքում, գիւղացիների դէմ սկսեցին գործադրել պաղ զէնքեր, որովհետև նրանք չէին ուզում աշխատել կալուածատիրոջ մօտ։

ՀԱՅ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի, յունիսի 20-ին, երեկոյեան ժամը 8-ին, Թիֆլիսի հայոց Առաջնորդարանում կայացաւ այն պատգամաւորների ժողովը, որոնք պէտք է ընտրէին 4 հոգի Թիֆլիսի գենեռալ-նահանգապետին կից կազմվելի հայ-թուրքական խորհրդակցութեան համար։

Այդ ատիթով մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի բոլոր 23 եկեղեցիներում միայն 16-ի մէջ կայացել էին ընտրութիւններ, հետևաբար միայն 16 եկեղեցիներ ընտրել էին պատգամաւորներ և դրանցից էլ 5-ը ընտրել էին պատգամաւոր միայն այն նպատակով, որ գան ժողովում յայտնեն, թէ իրանք անկապատակ են գտնում հայ-թուրքական խորհրդակցութիւնները նահանգապետներին և այլ վարչական ատեաններին կից, որովհետև կառավարութիւնը, եթէ միայն ցանկութիւն ունենար, ինքը շատ լաւ կարող է վերջ դնել հայ-թուրքական ընդհարումներին։ Այդ 5 պատգամաւորները այդպէս էլ յայտնեցին, մեկնեցին և ժողովին մասնակցելու էին միայն 11 պատգամաւորներ։ Սակայն դրանցից 3-ը բացակայ լինելով, ընտրութեան մասնակցին միայն 8 պատգամաւորներ, որոնք և կատարեցին գաղտնի քուէարկութիւն, որի հետևանքն եղաւ հետևեալը. 1) Յ. Ալիխանեան սուացաւ 8 ձայն 2) Արշակ Բաբեան—7 ձայն, 3) Միքայէլ Աթաբէկեան—7 ձայն, 4) Հ. Առաքելեան 6 ձայն, 5) Յ. Սպէնդիարեան 6 ձայն, 6) Արշակ Բարխուդարեան—5 ձայն։ Վիճակ ձգվելով, վիճակը ընկաւ պ. Յ. Սպէնդիարեանին, ուստի և որոշվեց հայ-թուրքական խորհրդակցութեան անդամ համարել պ. պ. Յ. Ալիխանեանին, Մ. Աթաբէկեանին, Ա. Բաբվին և Յ. Սպէնդիարեանին, իսկ փոխանդամներ—պ. պ. Հ. Առաքելեանին և Ա. Բարխուդարեանին։

ԴԱՍՎԱԾՆԵՐԸ ԵՒ ԴԱՏՈՂՆԵՐԸ

Կուրսկ նահանգի Լգով քաղաքում, ինչպէս հաղորդում են տեղական թերթերը, յունիսի 1-ին բանտում եղած բոլոր բանտարկեալները, թւով 30 մարդ, հաւաքել են իրանց ունեցած իրերը, բացել են բանտի դռները և դուրս են եկել հրապարակի վրա։ Երբ տարածիչներին հրամայել են կրակել նրանց վրա, սրանք բոլորը իրանց զէնքերը վայր են դցել, բացի մէկից, որը կրակել է. բայց այն էլ օդի մէջ միայն։ Հրապարակի վրա բանտարկեալները ժողով են կազմել և որոշել են, որ նրանք, որոնք բանտարկված էին խատաքրած հոգողութեան կանոնների 21-րդ յօդուածի համաձայն, կամ դատի են ենթարկված ժանդարմների կողմից և կամ թէ զեռ ևս դատաստանական քննութեան տակ են գտնվում, պէտք է իրանց տները գնան, իսկ նրանք, որոնք արդէն դատապարտված են դատարանով և, թէ անկապատ, բայց և այնպէս օրէնքի համաձայն են բանտարկութեան ենթարկվել որոշ ժամանակով, պէտք է վերադառնան բանտը։

Այս որոշման համաձայն տուն ցրվողների թիւը 35 եղաւ, իսկ մնացածները ինքնայօժար կերպով վերադարձան կրկին բանտ։

Տուն ցրվողները ամենից առաջ գնացին ոստիկանատուն, այնտեղ թողցին իրանց հագուստները և ապա ժողովրդի անպակաս բազմութեան ուղեկցութեամբ տարով ցրվեցին իրանց տները։ Մինչև մօտակայ գիւղը նրանց ուղեկցում էին քաղաքային բնակիչները, իսկ յետոյ գիւղացիները։ Դա մի կատարեալ ցոյց էր. իրանք իրանց ամենատխրի արժանացնողները ժողովրդի խուռն բազմութեան հետ անցնում էին գիւղերով կարմիր գլուխկները պարած և մարտիրէզ երգելով։

Կարդում էք այս բոլորը և աչքերիդ չէք հաւատում։ Մի թէ սրանից էլ աւելի մեծ անարխիա, անիշխանութիւն կարող է լինել։ Սակայն ոմ տեղեկց այս անիշխանութիւնը և ինչպէս կարող է մի երկրում անարխիա չը լինել, երբ հէնց իրանք իշխանաւորներն են ամեն օրէնք, ամեն իրաւունք ոտատակ տալիս։ Նայեցէք այն 45 բանտարկեալներին, որոնք առաջ բանտի գները արդէն բացվել էին և նոյնպէս համարձակ կարող էին իրանց տները ցրվել, ինչպէս և միւս իրանց 35 ընկերները, բայց նրանք այդ չեն անում. հոմազված լինելով հանդերձ, որ այն օրէնքները, որոնց հիման վրա իրանք բանտարկութեան են դատապարտված, չափազանց անկատար և անարդար են, բայց և այնպէս, երկրի թէկուզ վատ օրէնքները յարգած լինելու համար, նրանց ինքնայօժար կերպով կը բերին բանտ են վերադառնում։ Մի՞թէ գրանից էլ աւելի փառաւոր ապտակ կարող է լինել այն իշխանաւորների առաջի երեսին, որոնք ամեն օր, ամեն քայլափոխում ոտատակ են անում հէնց իրանց ստեղծած օրէնքները։

Իսկ մինչ կռանք մեր 35 հոգու ապտաստութեանը, որոնք, նախ քան իրանց տները ցրվելը, ոստիկանատուն են մտնում և իրանց հագուստները թողնում այնտեղ։ Արդեօք ամօթից չը կարմրից Լգովի ոստիկանապետը, զզվելի ասպետութեան տեսնելով, որը իր ամրոցի կեանքում տվերել է միշտ ամեն բան զգայագողի կատարել՝ առաջակի նման գիշերվայ ուշ ժամերին տները մտնել, խուզարկել, ձերբակալել և իր ճանկած որսին այնպէս անպատուել, որ օրերով փնտռելուց յետոյ միայն կարելի է լինում գտնել տեղը գտնել։

Այո, ժամանակները չափազանց փոփոխվել են։ Դատաւորները իրանց գատաստաններին օրինականութիւն են սովորեցնում, «հպատակները» իրանց իշխանաւորներին ազնուութեան և ասպետութեան դասեր են տալիս...

Ֆ.

ԹԻՖԼԻՍԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹԸ

Կովկասեան մամուլը նորերս հարստացաւ գերմանական մի նոր շաբաթաթերթով, «Kaukasische Post» («Կովկասեան պօստ») վերնագրով, որը լոյս է տեսնում գերմանացի յայտնի կովկասագէտ Արաուր Լայստի խմբագրութեամբ և Կուրտ ֆօն-Կուչենբախի հրատարակութեամբ։

Համառարած Ռուսաստանում ընկնված ազատարար շարժումը, որ առաջացրել է ներկայ փոթորկալի օրերը քաղաքական և տրնտեսական իրաւունքներ ձեռք բերելու տեսակէտից, պարզ է, որ ուժգին կերպով արձագանք պէտք է գտնէր Ռուսաստանի հպատակ բոլոր օտար ազգերի ազգայնական ինքնագիտակցութեան վրա, որոնցից իւրաքանչիւրը ուժգին թափով ներկայանում աշխատում է, որքան կարելի է քաղաքական և տնտեսական մեծ իրաւունքներ և նուաճումներ ձեռք բերել, ի նկատի ունենալով իր ազգայնական ընդհանուր և ինքնուրոյն շահերը։

Եւ յերաւի ոչ մի ժամանակ Ռուսաստանի ընակիչները և նրա հպատակ օտար ազգերը, այնպէս գիտակից կերպով չեն զգացել իրանց ընդհանուր շահերը, որքան այժմ։ Այդ ազգերից իւրաքանչիւրը աշխատում է իր ազգայնական ընդհանուր և ցանկալի շահերով ի մի խմբվել և ընդհանուր ու միացեալ այժերով մամուկցել ամբողջ Ռուսաստանի կուլտուրական, տնտեսական և քաղաքական զարգացման ազատարար գործին։

Ռուսաստանի այդ ընդհանուր, համատարած և ազատարար շարժումից ռուսահպատակ օտար ազգերից և ոչ մէկը չէ ցանկանում բացառութիւն կազմել։

Բնական է, որ այդպէս պէտք է վարվէին և ամբողջ Ռուսաստանի գերմանացի հպատակները ընդհանրապէս և Կովկասի գերմանացիները, մասնաւորապէս։

Մինչև այժմ ռուսահպատակ գերմանացիները Կովկասում չունէին մի սեփական օրգան, որտեղ Կովկասի գերմանացիները իրանց մայրենի լեզուով արձագանք տային Ռուսաստանի ազատարար շարժման, դրա վերաբերմամբ որոշէին իրանց բանական գիրքը և պաշտպանէին իրանց ազգայնական ընդհանուր շահերը։

Ահա այդ անհրաժեշտ կարիքից է բղխել Թիֆլիսի գերմանական շաբաթաթերթի ծընունդը, որի առաջին համարը ընթերցողի վրա բաւական լաւ տպաւորութիւն է թողնում։

Շաբաթաթերթի առաջնորդող յօդուածում պարզաբանված է իր ուղղութիւնը և նպատակը, որից բերում ենք հետևեալը. «Կովկասեան պօստը» պէտք է լինի Կովկասում ցրված մեր հայրենակիցների մէջնորդող և նրանց միմեանց հետ կապող օրգանը։ Մեր գլխաւոր նպատակն է մեր ընդհանուր շահերի պաշտպանութիւնը, որոնց միշտ պէտք է հրամայել լինի մեր մամուլում ուշադրութիւնը։ Ինչ բանի կարիք ունեն մեր բոլոր հայրենակիցները, լինեն նրանք վաճառականներ, արհեստաւորներ և հողագործներ, պէտք է մեր շաբաթաթերթի մէջ խօսվի և քննութեան ենթարկվի և որպէս զի ոչ մի նշանաւոր երևոյթ զոհ չը գնայ միակողմանի դատողութեան, դրա համար մենք մեր թերթի էջերը միշտ բաց կը պահենք ամեն ոչ կուսակցական և էական քննութեան համար։ Ընդունելու հասկանալի է, որ մեր շաբաթաթերթը պէտք է պաշտպանի կովկասեան մեր հայրենակիցների ոչ միայն նիւթական, այլ և մասաւոր ու բարոյական շահերը։

Շաբաթաթերթի առաջին համարը բաւական առատ նիւթ է պարունակում իր մէջ։ Ուշադրութեան արժանի են քաղաքական զանազան հարցերին և Կովկասի գերմանական գաղութներին նուիրված յօդուածները։

Այդ համարում թերթի խմբագիրը սկսել է նաև մի պատկեր վրացական կեանքից, որի գրականութեան հետ նա բաւական լաւ ծանօթ է։

Շաբաթաթերթը ունի իր բոլոր բաժինները, որոնք բաւական բարեխղճարար են խմբագրված։

Ցոյս ունենք, որ «Կովկասեան պօստը», նոյնպէս արձագանք կը տայ և արժանի կերպով կը գնահատի այն բոլոր երևոյթները, որոնք տեղի են ունենում նաև հայերի հասարակական կեանքում։ Դրանով նա մի խոշոր ծառայութիւն արած կը լինի և այն տեսակէտից, որ հայերին որոշ չափով կը ծանօթացնի իսկական Գերմանիային, որի հասարակական կարծիքը այնքան էլ լաւ չէ տրամադրված հայերի նկատմամբ։

Բարոյական այդ պահանջը մենք անում ենք գերմանական շաբաթաթերթից նրա համար, որովհետև նրա խմբագիր Արաուր Լայստը բաւական լաւ ծանօթ է հայերի հետ և երբեմն խմբագրում էր Աբգար Յովհաննիսեանի հրատարակութեամբ լոյս տեսնող «Armenische Bibliothek» (Հայկական գրադարան) ժողովածուն։

Նոր շաբաթաթերթին ցանկանում ենք աջողութիւն։

Լ. Բաբայեան

ՁԷ ՊԷՏՔ Է ՄՈՌԱՑՈՒԹԵԱՆ ՏԱԼ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՈՉ ՄԻ ԴԷՊՔՈՒՄ

Անցեալ տարվայ օգոստոսի 1-ին հրատարակված Բարձրագոյն հրամանի առիթով, որով կառավարութիւնը յետ գարձրեց մեզ մեր գպրոցները եկեղեցականաց ու դպրոցական կալուածքներով ու գոյքերով հանդերձ, Գանձակում ու դաւառի նշանաւոր գիւղերում տեղի ունեցան տօնախմբութիւններ, եկեղեցական հանդէսներ. մարդանդնելով, քէֆով, զուռնով ժողովուրդը արտայայտեց իր գոհունակութիւնը ու հրճուանքը։ Ծրարվեցին դպրոցներ քաղաքի ու գիւղերի համար. ընտրվեցին հոգաբարձութիւններ. սկսեցին մէջտեղեր ու աղբիւրներ փնտռել գպրոցները բանալու ու պահպանելու համար։ Բայց շուտով վրա հասան թուրքական խժդժութիւնները, թուրք-հայկական չարաբաստիկ ընդհարումները, որոնց շնորհիւ ամեն բան տակն ու վրա եղաւ, մենք ընկանք մինչև գարերի խորքերը, որտեղ խարխափում ենք մինչև օրս։ Շուտով թէ՞նք զուրս գալու արդեօք Լեռնթեմուրեան գարերի խեղդող մթնոլորտից, չը գիտենք, գուշակել անկարող ենք. օր չէ անցնում համարեա առանց այնպիսի փաստերի, որոնք աւելի ու աւելի անելիքաբերի կերպով հաստատում են այն, որ մենք մինչև ազարեան մթնոլորտից շուտ չենք ազատվելու...

Հէնց որ մի երկու շաբաթ խաղաղ է անցնում, սպանութիւն, տարդի յարձակում ու արիւնահեղութիւն չէ լինում, խրախուսվում, միամտաբար ուրախանում ենք այնչափ, որ կարծում ենք, թէ ամեն բան անցել է ու կարելի է հետևաբար խորհել, մտածել կեանքի ուրիշ պահանջների մասին, այլ ոչ միմիայն ֆիզիքական գոյութիւնը պահպանելու բարիս ամենասարսափելի մտքով. սկսում ենք մտածել գպրոցների, գրադարանների, ժողովրդական խաւար դժբախտ մասսայի գաստիարակութեան մասին, նրա կեանքի բարւոքման անհրաժեշտ պայմանների մասին, փայփայում ենք ծրագիրներ ու նոյն իսկ փորձում քայլեր անել նրանց իրագործումը երաղից իրականութիւն դարձնելու, բայց աներևոյթ հասատատութեան թաղող անգրագէտ կամ կիսագրագէտ երեխաների համար, գլխաւորապէս տեղի ունեցած աղէտներից ՁԼտոմածների։ Դպրոցում սովորում են մօտ 350 երեխայ, երկու տեսակ. նա վերջնականապէս չէ կանոնաւորված ու կազմակերպված. յոյս կայ, որ առաջիկայ սեպտեմբերից կը լրացնի իր թերութիւնները, կը կանոնաւորվի ու կը պահպանի իր գոյութիւնը նոյնպէս հայոց ծխական դպրոցները վերաբացուց յետոյ, քանի որ վերջինները, հերթական միջոցների սղութեան պատճառով, հնարաւորութիւն չեն ունենալ ընդունել բոլոր ուսումնատարաւ հայ երեխաներին, որոնց թիւը Գանձակում հասնում է 1500—1800 ամուսաղը, չը հաշված նրանց, որոնք սովորում են այժմ պետական ու մասնաւոր դպրոցներում։ Վերոյիշեալ դպրոցում բոլոր դասատուներն էլ պարապում են ձրիաբար. կամաւոր վարժուհիներն ու վարժապետները, որոնք աշխատում են այժմս այդ դպրոցում (պարապմունքները գիս շաբաթական են) ու նրանց զեկավար տիկին Աննա Ի. Մելիք-Բէգարեանը հասարակական հնորհակալութեան արժանի են։ Յուսով ենք, որ նրանք չանքեր չեն խնայիլ այդ դպրոցի գոյութիւնը մշտական դարձնելու։ Մինչև այժմ մեր ֆիզիքական գոյութիւնը պաշտպանելու հոգսը կլանում էր, վերջի տարվայ ընթացքում, մեր բոլոր ուշն ու միտքը սև իրականութիւնը այժմ էլ սոսկալի է նոյն հոգսին առաջնակարգ տեղ տալ. կարելի է ուրիշ ամեն բան մոռանալ յանուն նրա, բայց ոչ կրթական գործը, որ կենսական տնտղին նշանակութիւն ունի մեզ համար և որը պէտք է կազմակերպել առաջիկայ սեպտեմբերից, որին պէտք է կենդանութիւն տալ հնարաւորութեան չափ շուտով, ինչքան էլ որ անտանելի լինեն մեր կեանքի դաժան պայմանները...

Ստ. Տէր-Աւետիքեան

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Զ. Ճիսը

Ուսուցչական համագումարի վեցերորդ նիստը կայացաւ յունիսի 21-ին, առաւօտեան ժամը 9½-ին, նախագահութեամբ պ. Ի. Յարութիւնեանի։ Եղդ ժողովի զարգմունքի առարկաները կազմում էին հետեւեալ նիւթերը։

Կարդացվում, սրբագրվում և վաւերացվում է համագումարի նախորդ նիստի արձանագրութիւնը։

Ժողովի սկզբում համագումարին մասնակցող անդամներից մի քանիսը առաջարկում են թողնել այս նիստի խիստ զբաղմունքը և համագումարի խորհրդակցութեան և հեղինակաւոր քննութեան ենթարկել Զգաշնի և Յոնջանեան գպրոցների հարցերը և իր ձայնը բարձրացնել այդ հարցերը ցանկալի կերպով լուծելու համար։

Ժողովականներից մի քանիսը առարկում են, որ համագումարը դեռ ևս չէ կազմել իր պրոֆէսիոնալ միութիւնը և հետևապէս նա իրաւաբանական մի մարմին չէ և վաղաժամ է նրա համար մասնակցել այդպիսի հարցերի լուծմանը։

Համագումարը ձայնից բազմութեամբ որոշում է այդ հարցերի լուծման համար ընտրել մի յատուկ մասնաժողով։

Մասնաժողովը պէտք է իր մասնաման ք

բացատրութիւն, որից երևում է, որ այդ անոգութեան և զանցառութեան պատճառը իր չափազանց զբաղմունքներն են եղել։

Երկար վիճաբանութիւնների և քննադատութիւնների առարկայ են դառնում վերատուգող յանձնաժողովի առաջարկած մի քանի կրճատումները Ընկերութեան 1906 թ. նախագծի մէջ, այն է վարչութեան գործավարհաշվապահի և Մուշաղեան որբանոցի կառավարչուհու ռոճիկների կրճատում։ Վերատուգող յանձնաժողովի անդամ պ. Բարսեղ Առաքելեանի տուած բացատրութիւններից երևաց, որ Ընկերութեան գործավարը ստանում է 900 ռուբլի ռոճիկ տարեկան, որից 420 ր. վարչութեան միջոցներից, իսկ 480 ր. Մուշաղեանի կտակած գումարներից և այդ այն պատճառաբանութեամբ, թէ նա պահում է և Մուշաղեանի գումարների հաշիները։ Գաւլով որբանոցի կառավարչուհուն, նա ստանում է ռոճիկ 600 ր. և ամեն բան պատրաստ—բնակարան, ուտելիք, լուսաւորութիւն, ծառայ և այլն։ Արդ, վերատուգող յանձնաժողովը գտնում է, որ Մուշաղեանի հաշիների պահպանութիւնը շատ թեթև գործ է և վարչութիւնը եթէ հարկաւոր է գտնում այնքան գումարով վարձատրել իր գործավարի աշխատութիւնը, պէտք է վճարել 910 ր. իր միջոցներից և ոչ Մուշաղեանի գումարներից։ Կըրճատման դէմ խօսեց մանաւանդ պ. Ց. Սպենդիարեան, որը իբրև վարչութեան նախկին նախագահ, լաւ ծանօթ է թէ գործավարը և որբանոցի կառավարչուհին որպիսի ծանր աշխատութիւն են կատարում։ Այդ հարցի վճիռը թողնվեց, երբ կը քննվի նախահաշիւը։

Ընդհանուր ժողովը, չը կարողանալով ժամանակի ուշ լինելու պատճառով, ուսարատել օրակարգի բոլոր հարցերը և կատարել ընտրութիւնները, յետաձգեց ժողովի շարունակութիւնը առաջիկայ կիրակի օրվայ, յունիսի 25-ին։ Ցակոյն հարկաւոր համարեց մի քանի որոշումներ կայացնել, այն է 1) Աւելացնել վարչութեան անդամների թիւը։ 2) Փոխարինել տուած յօգուտ Թիւրքահայ գաղթականների 8000 ր. գումարի մնացորդ 3100 ռուբլին գործադրել 3 թիւրքահայ թաղականներ պահելու Ընկերութեան որբանոցում։ 3) Ուղարկել որբանոցի սաներին այս ամառ Սանահին (որբերի փոխադրութեան ծախքը յանձն առաւ վճարել պ. Վահան Յակոբեան, որը առաջարկեց նուիրել նոյնպէս 2000 ր. որբերի համար մնայուն գաղթավայր հաստատելու)։

ԱՐԵՇԵՒ ՀԻՆԳ ԳԻՒՂԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Արեշի հինգ գիւղերի նիւթական կրած կորուստների, անտեսապէս քայքայումների, բարոյապէս ստացած վիրաւորանքների մասին գրելու փորձեր եղան «Մշակի» և այլ լրագիրների մէջ, սակայն այդ բոլոր գրածները շատ և շատ հեռու էին արեշցիներին հասած ոգեսի կատարեալ նկարագրութիւնը տալու յատկութիւնից։

Ղարադաղով և Կուբ գեղով այդ սղմված և կղզիացած դաշտավայրը, ոռոգված Արեշգան-չայով և Կուլով, զարդարված զմրուխտագոյն արօտներով, ծածկված կանաչ արտերով և գեղեցկատիւ այգիներով. Արեշի կրած տուրքերը, անբաւական, կցկտուր գրված գրութիւններով ու նամակներով նախնաբար անգամ պատկերացնել անկարելի է։

Սակայն մինչև այսօր այդ գիւղերի եկեղեցիների մասին մի խօսք, մի ակնարկութիւն անգամ չէ եղել, չը նայած որ այդ գիւղացիները, որպէս նահապետական, եկեղեցասէր, բարեպաշտ, որպէս կենսրոններից խլված և մի խուլ անկիւնում զետեղված հին ժողովուրդ, իւրաքանչիւր գիւղում կառուցած են եկել կամարակապ, հոյակապ, քարեայ ու կրէ պատերով եկեղեցիներ։ Նոյնիսկ Հաւարիկու եկեղեցին իր գեղեցիկ արտաքինով և ներքին կամարակապ հրաշալի սիւներով կարող էր մրցել նոյնոյն եկեղեցիների հետ։ Բայց այսօր այդ եկեղեցիները մի մի ափերակներ են, ուր չղջիկները ու բուերը ապաս եղու մուտ են անում անպատանան, անդուռն անցքերով և այցելուի ոտքերների վրա սարսափ ազդում։ Այցելուն երկու քայլ եկեղեցու գռնից մոնետվով, նայելով եկեղեցու ներսը, ակամայից աչք ձգելով բաց պատուհաններից ներս գլուխ ծռած մարդահասակ բոյսերին, մի րոպէ շշմում, վերանում է և իրան դարձ ապով գոյութիւն ունեցող ուտիպկի մէջ է երևակայում, իր հարարուրը անգամ մտած կեղեցին նա անկարող է ճանաչել. ոչ մի նըշանութիւն գտնել չէ կարելի. ամբողջ եկեղեցու յատակը քանդել, խորը ու բորբ, փասեր ու խրամներ են. խորանների մէջի հողակոյտերը փակել են անցքը. երևի հայ եկեղեցու առասպելաբանված գանձերն է որոնել թուրք թարգման խոժանը։

—Պատարագի զգեստից, որը պէտքական են համարել, վերցրել են, իսկ որը ոչ, ճղոտել, այրել, թափթփել են եկեղեցու մէջ. սարդաւարը գնելով ծառի վրա, գնդակի նշանառել են զինել և գնդակահարել. խաչերը ջարդել, սեղանի քարերը քանդել, տեղահան են արել և բոլորի տակը բանով ու բրիչով փորել։ Պատերի ու քարերի վրա փորված ու հանված խաչերը բոլորը ելնչարով, կացինով և բրիչով քանդել, տեղատեղ ալրով ծեփել են. գերքերը պատատուել, մի քանիսը այրել են. ամբողջ եկեղեցին ծածկված է ուտարանի թերթերով. պատկերները պատառոտել են, նկարների ոմանց աչքերն են հանել, ոմանց բերանը ճղել, ոմանց էլ վզից կտրել խենչարով, որպէս թէ մարթեր։ Զանգերից և ժամակարներից, որոնք փայլուն են եղել, ոսկի և արծաթ կարծելով տարել են, իսկ որոնց գոյնը ծխոված և սևացած է եղել, կացնով ու բրիչներով ջարդել ու թափել են. ամբողջ եկեղեցին, նորիսկ բակը լիքն են պատկերների, գլուխների, ջանների և այլ իրերի մնացորդներով—ոտ դնելու տեղ չը կայ,

Արեշի բարեպաշտ ժողովուրդը հապճեպ և արագ արագ մանում է եկեղեցի և զարմանքից պաշարված ձեռքերով ծեծում ծնկները. նրա համար տանելի էր ամեն մի զրկանք, բայց եկեղեցին այդ դրութեան մէջ նա չէր երևակայում. լուռ ու մունջ արտասուք թափելով, ձայնը ելքի տակ խլացնելով՝ նա ժողովում է աչքի հանդիպած նուիրական իրերի մնացորդները և խնամքով տեղաւորում եկեղեցու մէջ։

Բոլոր եկեղեցիների զանգակները գողացել, փունջը 5 կօպէկով վաճառել են պղնձավաճառին, իսկ Քեանդակի եկեղեցու զանգերը կախել են Զանկալլուի մոտակայ ծառերից և պարտաւորացրել, որ գնացող և եկող թուրքը զանգահարել և ծաղրել հայի հատառը և եկեղեցին. եկեղեցիների բոլորի գմբեթը և պատուհանները տարել են, փոքրել են և տանել շրջանակները, որի հանելու ժամանակ անխնայ բրիչներով քանդել են պատերից։ Գաւիթների սիւները հանելու ժամանակ առաստաղները ընկել են և եկեղեցու երկաթով ծածկած կտուրների մեծ մասը ուտերի։ Գեղեցիկ խաչերից, որոնք փայլուն են եղել, բարձրացել և վերցրել են, իսկ որոնք սև են եղել, մասեղով սը ոսկի և արծաթ լինել չեն կարող, գնդակահար են արել և կտորատել, իսկ Քեանդակու գմբեթի խաչը մի քանի տեղից գնդակով կոտրատել և թափել են փողոցի մէջ։ Կոտրել են եկեղեցու բակի մէջ կանգնեցրած ծառերի գեղեցիկները։ Հաւարիկու եկեղեցու բակի չինարներից հաղիւսելուի թուրքերը տախտակներ են հանել ուտել, իսկ Քեանդակու եկեղեցու բակի ծառերից Ցիրլիզաղի թուրքերը տան ցեղաներ են պատրաստել։ Ամենայն ջանք գործ են դրել որ Հաւարիկի եկեղեցին փլեն, օրինակ բազմիցս անգամ ջուր են կապել, բայց այդ նրանց չէ աջողվել։

Մաղրդուղի այրի կին Նանուշ Յարութիւնեանը, որը գերվել էր Ղարվարայի թուրքերից և ապա թուրք կանանց օգնութեամբ թուրքի հագուստով փոխել է, պատմում է թիւրեան։ «Տէր-Հայր, թէպէտ մեր Մաղրդուի եկեղեցու մէջ է սպանվել իմ ամուսինս, թէպէտ ես ինքս էլ ոչ սակաւ տառապանքներ եմ կրել իմ երեք օրվայ գերիվարութեան ընթացքում, բայց, որ եկեղեցին մաս, վայ իմ աչքերիս, ամեն ինչ մոռացայ, իմ սիրական վիշոը տանելի էր, հեղեցու կրած վիրաւորանքների հետ համեմատելու։ Եկեղեցու բոլոր պատերը գնդակից ծակտվել էին։ առաստաղի մի մասը այրվել, տոմոսակները թափթփվել էին։ երբ նայեցի սեղանին, որտեղ իմ մարդս է ընկել թուրքի գնդակից, աչքերս սևացաւ, արցունքս խեղդեց ինձ. լաց լինել չէի կարող, կը մատնվէի, իսկ արցունքս հոսում էր լճացած աչքերիցս. կուլ էի տալիս արցունքս և Աստուծն գոռոտանի կանչում. եկեղեցին պղծված էր... ուտարանի մէջը պատառոտած, միւսը պղծված էր... Ա՜յ Աստուած, ապացի էս, պէտք մենք այդ ուտարանից վախենում էինք, չէինք երդվում, ինչու Քո տունը պղծողին, Քո ուտարանը այդպէս պատառոտողին հազար ու մի պատառ չես անում, աշխարհը ինչու Քո հրաշքներով չես զարմացնում»...

Աւերված հինգ գիւղերից Քեանդակի և Հաւարիկի քաղաքացիները կարողացել են եկեղեցու թանկագին ոսկէ և արծաթէ իրերը և գրքերից մի քանիսը վերցնել և իրանց հետ տարել են, իսկ Եղմէնի-բաղարի, Նեմեթապատի և Մաղրդուի եկեղեցիների բոլոր սրբութիւնները ընկել են յափշտակող թուրքի ձեռքը, որոնք ինչպէս ասում են նոյն ցեխով, հողով լուացել են և ապա իրանց մէջ բաժին արել։

Հաւարիկու եկեղեցու զանգակները տարել է աբշուեցի Աւագը և թաղցրել է գոմում տխոտի մէջ. գրա կինը թոնրի մոխիրը ժողովելով թիի վրա, թափել է գոմի կտուրը, որ անձրևային եղանակին չը կաթի. ահա այդ կրակից գոմը այրվում է և գոմի հետ այրվում են թուրքի երեք գոմէշները։

Մաղրդուի եկեղեցու առաստաղը կրակով բէգզեցի թուրքի ձեռքը գնդակը տարել է։ Հաւարիկի եկեղեցու գաւթի սիւնը տանող աքշամցի Իսկենդեր-օղլին, կատակեր անելիս սպանվում է ընկերի գնդակից։

Եթէ նոյնմանն պատահական դէպքերը չաղդէին թուրք աւելի նախապաշարված և առաւել շատ հաւատացող ոգեսի տարրի վրա, ոմ գիտէ, գուցէ եկեղեցու քարերն անգամ ասէին։

Այդ գիւղերն աւերելու ժամանակ թէ հարեան գիւղերի էֆէնդիները և մոլլաները ինչ գերքեր են բռնել, այդ նկարագրելը սարսափելի է. թուրք կարգացողները ուղղակի «զազալատ» են քարոզելիս եղել։

Շեղկովնիկներին, Սուլթանովներին, պրիստաւի, Արեշի բոլոր քահանաների և մօտ հարիւր ոնձանց ներկայութեամբ քահանան մոլլաները իրանց ուխտածը, իրանց տուած պայմանը, մի քահանայի հետ միևնոյն ամանում ճաշերը մոռացել էին։ Նրանք ապրանքի վրա մինչև անգամ կռիւ են արել, տարել, ժողովել են աւելի քան թուրք անգրագէտ ոգեսը։ Մինդեչեվարի էֆէնդու տանը ըստկանների գլուխն են բռնում. էֆէնդի և բէյչիյ. որքան ազատութիւն. քանի գրգռված է եղել նրանց տիրտրակը։ Ինչպէս ասում են քանդակեցի հանգուցեալ Յովսէփ Մելիք-Մելքոնեանի լիմոնի ծառի վրա Մինդիչեվարի մոլլան կուռ է բռնվել իր համագիւղացի մի թուրքի հետ և վէճը քիչ է մնացել, որ ուղղակի խէնչարի հասնի, միւս կողմից մի այլ թուրք լիմոնի ծառը վայր ձգելով պատշգամբից վերջացնում է կռիւը երկուսին էլ գրկելով տարարկայից։

Հաւարիկու էֆէնդու բակի ծառերն անգամ հայի են և ինքը չէ ուզանում. «ուրիշը պէտք է ասէր, ես եմ բերել»—արգարանում է գուբանի աշակերտը։

Սամակ քահ. Տէր-Գոդոսեան

ՂՐԻՄ ԹԵՐԱԿՂՁՈՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՁԱՅՆԸ

(Նամակ Մմբագրութեան)

Ղրիմ Թերակղզու հայերս, որ ռուսահայերի մի հատուածն ենք կազմում, այսօր միացնում ենք մեր ուրախութիւնը ընդհանուր հայութեան հետ, որովհետև տեսանք մեր իրձերն ու փափագները իրականացած, մեր ժողովրդի զարեւոր իրաւունքը վերականգնած, հայոց Վեհապետից Սահմանադրութիւն ստրված... Փառք և պատիւ Վեհափառ Կաթողիկոսին, որ արժանացաւ իր ժողովրդին մկրտել Սահմանադրութեան աւազանում։

Ղրիմ Թերակղզու հայութեան վերքերը բաւական խոր են։ Այսօր այս ժողովրդի առաջ բացվում է գործունէութեան մի լայն ասպարէզ, արմատական մի բարեփոխութիւն, մի յաղթական քայլ՝ հին-հին աւերակների բեկորների վրա կանգնեցնել մի հոյակապ շէնք, որին երկար տարիներից ի վեր կարօտ էր նա։

Սակայն խիստ կարեւոր է, որ այսուհետև հայ ժողովուրդը գիտակցաբար վերաբերվէ եկեղեցական սահմանադրութեան, գործնական վերամէջ հայրապետական կոնդակը։

Եթէ ձեռքերս ծալած սպասենք, թէ երբ հրամարակն կը տան մեր նշանակոլի թեմական առաջնորդներն ու փոխանորդ հայրերը, մեր սենեակի, հոնսիսատրիաների և հոգեոր կառավարութիւնների մէջ ծառայողները իրանց ամբողջ կազմով, այդ «ոչ տեսանես զեգիպտոսն»։

Անհրաժեշտ է մի երկրորդ կոնդակ, որով յիշեալ պաշտօնեաները արձակված հանվին, որի մէջ և հայ ժողովրդին մի կոչ նոր ընտրութիւնների ձեռնարկելու։ Ահա այս դէպքում միայն կարելի է գործնականի դիմել, թեմերի վարչական անձանց ընտրութիւններով զբաղվել։

Մեր բիւրակրան հոգեոր վարիչներից շատերի սիրան արդէն կը սկսի թրթռալ, երակներում արիւնը սառչել, միտքը շփոթել... Զէ՞ որ ծանր է տարիներով շահագործած չաղ պաշտօնից հեռանալը, անպաշտօն մնալ։ Ինչ անիծ. ժամանակը իր արդար դատավճիռը կանէ. ապագայում ընտրութիւնները ցոյց կը տան մեր կուսակրօն հայերի արժանիքն ու ցանկը։

Դէմ թերակղզու հայերը ամենայն հաւանականութեամբ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանին աչքի առաջ կունենան ապագայ թեմական առաջնորդի պաշտօնով, որովհետև նա միայն կարող է Բեսարաբիայի և Նախիջևանի թեմի հոգեոր և ազգային գործերը կանոնաւորել, որ երկար տարիներից ի վեր խճճված ու այլանդակված է։

Գարեգին քահ. Ասրեանց

Ղարասուբաղար

ՅԱՆՁԱՒՈՐՆԵՐԸ ՄԵՂԱԴՐՈՒՈՅ ԴԵՐԻ ՄԷՋ ԵՆ

Վերջին ժամանակներս մամուլի վերանշեալ մարմնի գլխաւոր վարչութիւնը մի առանձին եռանդով է աշխատում։ Մի կողմ թողնելով սոցիալիստական թերթերը, որոնք անխնայ հարձակների են ենթարկվում ուղղակի իրանց ուղղութեան համար, նոյնպէս խիստ հարձակների են ենթարկել և ոչ օգտակարական թերթերը և նոյն իսկ այն տարբերները, որտեղ տպագրվում են հարձակվող թերթերը։ Այդ խստացված հարձակների ամենագլխաւոր պատճառը Բեյօսաղլուի կառավարութեան ձեռքով ապրած տարբերների մերկացումներն ու նրանց մասին արված դատաստանութիւններն են։

Իր յարուցած հարձակներին կառավարութիւնը աւելի մեծ կշռիւ և նշանակութիւն տալու համար, ոչ միայն բաւականանում է իր համար անհանգոյ թերթերը կօնֆիսկացիայի ենթարկելով ու թերթը փակելով, այլ նաև շատ թերթերի խմբագիրներին դատաստանական պատասխանատուութեան է ենթարկում, մեղադրելով նրանց «ժողովրդի մի մասը միսսի դէմ գրգռելու նպատակով սուտ և հերետիկ լուրեր տարածելու մէջ»։

Ինչպէս տեսնում էք, շատ զգալի և միանգամայն մեղադրելի յանցանք է այդ։ Զէ՞ որ դա մի հատարաւ պրովոկացիա է։ Ի՞նչպէս կարելի է թոյլ տալ, որ հասարակական ու քաղաքական կեանքի վրա պայծառ լոյս սփռելու գիտաւորութեամբ հրատարակվող թերթերը յանկարծ պրովոկացիայով պարապեն, իրանց հնարած սուտ լուրերով ժողովրդի մի մասը միսսի դէմ գրգռեն և այդպիսով եղբայրասպան կռորածներ առաջացնեն երկրի մէջ։ Դա մի կատարեալ դաւաճանութիւն է ժողովրդի և պետութեան դէմ, որի համար յանցաւորները ամենախիստ պատիժը պէտք է կրեն։

Սակայն ներկայ դէպքում տարօրինակն ու զայրացուցիչը հէնց այն է, որ այդպիսի ծանր յանցանքների համար մեղադրողի դերի մէջ դուրս է գալիս, ամբողջ աշխարհից իբրև ամենահանուն պրովոկացիոն ճանաչված մեր բիւրակրատական կուսակրութիւնը, իսկ մեղադրվողների դերի մէջ ճիշտ այն խմբագիրները, որոնց ամենամեծ առաքինութիւնն ու քաջութիւնը հէնց նրա մէջ է կայանում, որ ամեն կերպ աշխատում են կառավարութեան այդ նենգամիտ պրովոկացիան ներկայացնել և օր առաջ սպառնացող չարիքի առաջը առնել։

Պրովոկացիայի և ժողովրդի մի մասը միսսի դէմ գրգռելու մասին է խօսում այն բիւրակրատիան, որը վերևից մինչև ցած, ըստ կոմս Ուրուսովի հիանալի բնութագրման, «գօրգոլայ ու վախմիստր է իր կրթութեամբ ու պաշտօնով և իր համագործակցներով։ Դատաստանական պատասխանատուութեան անձնից է խօսում այն կառավարութիւնը, որը, ինչպէս նոյն նախկին մինիստրի օգնական Ուրուսովը ասաց իր մերկացումների ժամանակ, պարզապէս գեղատուներով պօգրոմներ է նախապատրաստում իր ոստիկանական բարձր գեսպատուներում և ուզում տեղն ու ուզած ժամանակ սոսկալի արիւնհեղութիւններ առաջացնում։ Մեղադրվող դերի մէջ են ուզում մտնել այն մարդիկ, որոնք հէնց իրանց կարգադրութեամբ թիված պրովոկատորական և սև հարիւրիներին կազմակերպվելու հրաւիրող զրոյցներին մասնակցելու հրաւիրող զրոյցներ է ստացել։ Բայց այդ պարագայում յանցաւորների նստարանի վրա (ինչ նստարան հարկաւոր կը լինի մի քանի հարիւր հազար նստարաններ) նստողները ոչ թէ հալածվող թիրթերի խմբագիրները կը լինեն, որոնց հաղորդած տեղեկութիւններն ու զուշակութիւնները մի առ մի միշտ ճշդվել են մի քանի օրից յետոյ, այլ հէնց այն կառավարութիւնն ու ադմինիստրատորները, որոնք այսօր գրանց դատի են ենթարկում, և այն դատաւորները, որոնք վաղը, նոյն յանցաւոր կառավարութեան ցուցմունքների ու թելադրութեան համաձայն, նրանց պէտք է դատեն։

Բոլորովին չենք կասկածում, որ շուտով, շատ շուտով այդ արդարադատ օրը տեսնելուն էլ կարժանանանք։

Ա.-Ագատ

ԴԱՐՁԵԱԼ ԳԻՒՂԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«Ն՝շակ» լրագրի 65-րդ համարում կարդացինք մի լուր Թիւրիցից, որ տեղացի ինտելիգենտները մի խումբ մտադիր է գիւղական լրագիր հրատարակել Աւելացնենք և այն, որ մի ընտանեկան երեկոյթում դրա համար ժողովարարութիւն եղաւ գիւղական լրագրի ֆոնդ կազմելու, որի առիթով ժողոված փողերի հետևանքի մասին մեզ մատին մեզ մինչև այժմ ոչ մի տեղեկութիւն տվող չը կայ։

Ցայսմհետև մեր ՀԵՌ համակրութիւնը գիւղական լրագիր հրատարակելու ջանքերին, աւելորդ չենք համարում այդ ուրիշներ մի քանի խօսք ասել։ Գիւղական լրագրի կարիքը զգացվում էր շատ վաղուց, դեռ 1902 թուին «Մշակը» 64—65 համարներում մի ընդարձակ բանաստեղծական նուիրեցինք այդ նիւթի մասին։ Մեզ պատասխանեցին նոյն լրագրում, որ գիւղական լրագրին կարող են փոխարինել «Մշակը» և ուրիշ նոյնանման լրագիրներ, որոնց տարածվելու միջոցները պէտք է հոգալ։

Ընդունելով որ շատ ցանկալի է Կովկասի մարաքաղաքի հայ և նոյնիսկ օտարազգու լրագրների տարածվելը մեր գիւղական շՔՐ-ջանններում ամենաընդարձակ ծաւալով, կրկնում ենք մի անգամ էլ, որ այդ օգտակար ցանկութիւնը անիրագործելի է և կը լինի շատ սամմանական, ինչպէս օրինակը տեսել ենք մինչև այժմ և շատ եզակը ժամանակ էլ կը մնայ նոյնը։ Մեծ լրագրների 10 և 7 ռուբլի գները շատ զգալի են խրդճակ գիւղացու թշուառ գրպանի համար. որքան փորձեր էլ եղել են ընկերութեամբ լրագիր գիւղերում տարածելու՝ չէ յաջողվել հէնց այն պարզ և ապացուցված պատճառով, որ համբաւաւորութեան գաղափարը հայերիս մէջ լիովին բացակայում է։ Որքան գարածված լինեն ժողովրդի մէջ մայրաքաղաքի հեռու տեղերում հրատարակվող լրագրները, նրանք այնուամենայնիւ չեն կարող տեղական լրագրի դերը կատարել։ Շատ խնդիրներ և այն էլ այրող խնդիրներ կան, որ չեն կարող մուտք գործել դրսի քաղաքական մեծ լրագրներում՝ առանձնայատուկ զուտ տեղական ընտրութիւն ունենալու պատճառով։ Մի հարց որ շատ հեռաքերիր է, դիցուք, Աբարտանի շրջանում, կարող է բոլորովին հետաքրքիր չը լինել Թիֆլիսի, Ղարաբաղի ընթերցողի համար և ընդհակառակը մայրաքաղաքում հրատարակվող լրագրի մէջ դիցուք Նիցէէի, մարքսիզմի մասին արծարծված խնդիրները միանգամայն կը շշմեցնեն խեղճ աբարանցու գլուխը և կը գրգռացնեն նրան կարդալուց, որովհետև աբարանցին դեռ ևս գիրը կապելով է կարդում։ Տեղական կեանքին շատ մտիկ գրուածքներ պէտք է լինեն, որ նա կարդալով հետաքրքրվել, որ նա հետաքրքրվի ու զօռ տայ գիր կապելով կարդալուն։

Գաղաքական մեծ լրագրները կը տարածվեն գիւղական շրջաններում ցանկալի քանակութեամբ այն ժամանակ միայն, երբ գոնէ մի երկու տասնեակ տարի գոյութիւն ունեցած կը լինեն գիւղական համեստ ժամանակի լրագրներ, որոնք հող կը պատրաստեն նրանց ապագայ լայն ընթերցանութեան համար։

Մեր երկրի ընտրիչը զարմանալի մարդ տարբեր պայմաններ ունի առանց ասնչութեան և որոնցից իւրաքանչիւրը կարօտ է առանձին խնամքով ուսումնասիրութեան, որ չեն կարող կատարել՝ մեր ունեցած հեռու վայրերում, գլխաւորապէս Թիֆլիսում հրատարակվող լրագրները։ Եթէ մեզ թեստ բարեհոգ ուսումնասիրութեան կատարի Երևանի նահանգի Նոր-Բայազետ գաւառի մասին, դրանով հրէջ չէ կարելի գաղափար կազմել նոյն նահանգի Սուրմալու գաւառի մասին։ Գիւղական լրագիրը շատ մտ կանգնած կը լինի ժողովրդին, որի կեանքը ներկայացնում շատ թշուառացնող պայմաններ ունի, անտեսական, մտաւոր, գիւղական և այլն, որ լուծվելու է իւրաքանչիւր շրջանում իր առանձնայատուկ ձեւերով, որին նպաստաւոր կարող է լինել միմիայն տեղական լրագիրը։

Երևանի նահանգի վերաբերեալ կարող եմ ասել, որ առ այժմ գտնէ երեք կենտրոններում անհրաժեշտ է գիւղական լրագիր ունենալ, այն է՝ Էջմիածնում (Վաղարշապատում) Ալեքսանդրոպոլում և Նոր-Բայազետում։ Էջմիածնում հրատարակվողը կարող է գոյութիւն ունենալ և օգտակար լինել Էջմիածնի, Սուրմալուի, Երևանի և Նախիջևանի գաւառների համար։ Ալեքսանդրոպոլում հրատարակվողը՝ ամբողջ Շիրակի, Կարսի և Էջմիածնի գաւառաց՝ Աբարանի համար։ Նոր-Բայազետում հրատարակվողը՝ Նոր-Բայազետի, Փամբակի, Դարաչիչագի շրջանների համար և այլն։ Մենք իբրև օրինակ բերեցինք վերոյիշեալ երեք շրջանը, այն ինչ կարելի է դեռ շատ ընդարձակել, մանրացնել և ձեռնարկել միւս նահանգներում ևս։

Ամենարագաս կենտրոններում հնարաւոր է իրագործել գիւղական լրագրի հրատարակութիւնը, որովհետև երկուսում արդէն տպարաններ կան, երրորդում՝ իբրև քաղաքում (Նոր Բայազետում) հնարաւոր է իրագործել, և որ ամենագլխաւորն է, յիշեալ վայրերում գտնէ մի սամմանական թիւ կրթված, ինտելիգենտ մարդիկ կարելի է գտնել։

Գալով Թիֆլիսն՝ լրագիր հրատարակելը առ այժմ անհնարին ենք համարում շրջանի փոքրութեան պատճառով, եւ շատ դժուար է առանձին տպարան պահել, իսկ ինտելիգենտ կրթված մարդկանց լիակատար ամայութիւն է տիրում։

Եթէ ամեն շաբաթ-սիրուն հանող ինտելիգենտ կոչվի՝ շատ ողբալի նշանակութիւն պէտք է ունեցած լինի ինտելիգենտ բառը։

Ինտելիգենտ բառը իրգիրցիների վերաբերմամբ գործածելը անխիղճ զրպարտութիւն կը լինի...։

Ինտելիգենտ լինելու համար բաւական չէ միայն մի օրէնք ուսումնարան աւարտած և նոր ձեւի շորեր հագած լինել, այլ հարկաւոր է ունենալ նաև բարոյական դաստիարակութիւն, գոնէ համեստ իդեալական ձգտումներ, մաքուր անելիք բնաւորութիւն, որպիսի յատկութիւններ խոշորացոյցով էլ դժուար է գտնել Իգդիրում։

Այստեղ հասարակական շահի մասին խօսողը ամենից առաջ իր անձնական շահը նկատի ունի, որը ձեռք բերելու համար ամենաարձը սուրը սկզբունքը նա կը տրորի առանց խղճի խայթ զգալու։

Իգդիր անունը հեռուից հնչուն է միայն դատարկ կարասի նման։

Մի երկու ամիս առաջ իգդիրցիներին կոչ հրատարակեցին «ձեռք քաշել թաղթայական խայտառակ վարմունքներից», որը վերջնակապէս քայքայել է խեղճ ժողովրդին, սակայն հէնց կոչ տարածողները իրանք իրանց չը կարողացան մաքրել այդ խայտառակ յատկութիւններից, որի մէջ երիտասարդ նոր սերունդը մրցանակը խլում է հին սերունդից։

Միացէք իդգիրցու հետ յանուն ամենամեծ իդեալի իրագործման, բայց երբ անձնական շահը ամենաչնչին շեղում պահանջից իդգիրցուց՝ նա կանգ չի առնել և ոչ մի միջոցի առաջ այդ իդեալը ոտնահար անելու համար միայն թէ նա կարող լինի պաշտպանել, առաջ տանել իր ասը, իր անձնական շահը։ Այդպիսի յատկութիւններով ածուածը ինտելիգենտ կոչվելու իրաւունք չունի, բայցաւութիւնը շատ նչին է։

Քիչ և հօթ երկար տարիների փորձերը հիմք են տալիս մեզ այդպիսի սխալ եզրակացութեան գալու Իգդիրի մասին։

Ցոմ. Խօջաէյնաթեան

ՄԱՌԻԵՑԻՐ ԱՍՊԱՐԷԶԸ

V

Հոգեոր վարչութիւնների և գործող կամաշկանութիւնների դէմ բողոքը գագաթնակէտին է հասել։ Կարգապահ և օրինապահ ոգեոդներին, թէ անցեալում և թէ ներկայում, հինգ մասների վրա հավիս կարելի է համարել։

Մեր անցեալ յօդուածներում բերածները չեն լրացնում այն ծով վէրքերը, որոնք ցից և ուսիմ գարձած՝ կրծում են Ղարաբաղի հայութեան սիրտը և դրպանը։

Թուեցինք՝ որ

Վանքերն աւերակ են, անվանտայոյ։

Վանքական կալուածներն անխնամ ու անկառավարիչ։

Գիւղերն առանց դպրոցների և դպրոցներն առանց թեմ տեսչի։ Գիւղական եկեղեցիներն անիրէգիտ, եկամուտներն անկանոնաւոր։ Քահանաների ձեռնադրութիւնը գարձեալ տգէտներից և ուսեալները ասպարէզից հեռու։

Կանոնաւորական գանձարանը անկանոնաւոր, հաշուետուութիւնը վերացած։

Եկամուտները կրկնապատկվելիս՝ միմիայն ռոճիկներ աւելացնելու համար։

Գործակալութիւնը անկանոն, պաշտօն կատարելը ոանաապակ տուած, երեսի վրա թողած։

Թուենք և մի քանի փաստեր ցոյց տալու համար, որ պաշտօնի գլուխ անցնող մարդիկ աւելի վերադասում են իրանց հաս, շանը, քան ընդհանուրի բարեկեցութիւնը, որի հոգսերը «պաշտօնում» գրված են նրանց վրա։

Եպիսկոպոս, վարդապետ վիճակ գնալով հրանգութիւն են ստանում ճանապարհածախս ոտնել «ըստ չափու վերարից և ըստ ատրճանի պաշտամանն»։ Նրանք նստում են գանձարանի առաջ և ճանապարհածախսը հաշվում են իրանց «կշռով»։ Երևակայեցէք, որ երկաթուղու առաջին կամ երկրորդ կարգի գնացքը և նրանց տուած վճարը թողնելով նրանք հաշվում են վերստերով և ձիերի հաշվով որը, իհարկէ, 3—4 անգամ աւել է նրա տուած։ Երկաթուղի և ձի... Սա էլ օրէնք է, որի զօրութեամբ էջմիածնից Շուշի եկող վարդապետը ստանում է 37 ռուբլի 64 կօպէկի փոխարէն 85 ռուբլի 56 կօպէկ. իսկ եպիսկոպոսը 80 ռուբլու փոխարէն 135 ռուբլի վիճակի գանձարանից, 100 ռուբլի եկեղեցիներից և 150 ռուբլի թեմական գպրոցից։ Բայց մի՞թէ սրանով ազատ շունչ է քաշում աղքատ վիճակի աղքատ գանձարանը։ Նա պէտք է ռաբլաց ռուբլի ծեռ... Զէ՞ք հաւատում. լսեցէք—Հին ասպնջորդը ծառայում է մինչև այն օրը, երբ հրաման է ստանում մեկնելու իր պաշտօնավայրից և որ օր նա իր ձեռքը էտ է քաշում պաշտօնի գլխից. ընկանաքար, թէ ըստ խղճի և թէ ըստ օրէնքի, նա ստանում է իր օրվայ վարձը, որովհետև խեղճ չէ «գծանրութիւն ասուրն բառնալ և ի ժամ վարձու անմասն ելանիլ»։ Ասանում է ու գնում։ Գալիս է նորը, ձեռքին մի հրաման, ստանալու այն երկու ա ԽՕՎԱ ռոճիկը, որի ժամանակ ինքը չէր գործում, այլ նա, որ ասացել և գնացել է։ Եւ սա էլ է ստանում, ինչ էք ասում, որովհետև բուբլին բուբլի է ծնում...

Այդ գեռ բոլորը չէ։

Էջմիածնից մերժումներ են լինում ձեռնադրութիւն—յայտնի, իրաւացի պատճառներով մերժումներ։ Ընդունեցէք կամ ոգիտութիւն, կամ զինուորագրութիւն, նոյն իսկ 17—18 տարեկան։ Եւ ահա ձեռնադրվում են այդ մերժված մարդիկ, ձեռնադրվում են քահանաներ փառաւոր կերպով։ Տեղը գայ, անունները կը յիշենք։

Օրինակները թուելով չի հասնիլ։

Սակայն ինչից է առաջանում այս ամենը։

Սխալված չենք լինիլ, եթէ ասենք—անհոգութիւնից, անտարբերութիւնից, խնամիութիւնից, արգարադատութեան ու կարգապահութեան, պահանջի ու կօնտրօլի, քննութեան ու վերաքննութեան բացակայութիւնից։

Ահա այս վէրքերն էին և ժողովրդի անվերջ բողոքները, որ վերջապէս լսելի եղան էջմիածնում և Վեհափառ Հայրապետը բարեհաճեց հոգեոր գործերի կառավարութիւնը ժողովրդի ձեռքը տալ—ժողովուրդը պէտք է ընտրէ իր առաջնորդը, յայտարդը, գործակալը, հոգեոր կառավարութեան պաշտօնեաները, հոգեորական թէ աշխարհական, և ժողովրդի ընտրածները պէտք է վարեն վարչական գործերը։

Սա ապացոյց է, որ մեզ պէտք են կենդանի քան թմրած մարդիկ։

Բայց այդ ժողովրդին է մնում ընտրել և այդ պաշտօնեաների գործունէութիւնների համար վերանսկիչ ու վերատուգիչ մարմիններ, որոնց մասին չէ յիշված հայրապետական կոնդակում և որոնց գոյութիւնը ուրիշ քան անհրաժեշտ է։

Թող ժողովուրդն իմանայ, որ իր տուած կօպէկը չէ վատնվում և աւելորդ տեղը չէ ծախսվում...

Տ.

ԲԱԳՈՒԻ ԵՒ ՆԱԽԱՆԳԻ ԹՈՒՐՔ ԸՆՏՐԵԱԼՆԵՐԸ

II

Մահմեդ Թաղի Ալի Զադէ

1858 թուին ծնված է Շամախիում, մի վաճառական ընտանիքից։ 15—16 տարեկան հասակում Թիֆլիս գալով նոյն ժամանակի շէյխ-իւլ-իսլամ, շէյխ Ահմէդի ազգականներից լինելու պատճառով մտնում է նրա հովանաւորութեան և կրթութեան տակ։ Գարապիլ է արեւելեան լեզուներով և գրականութիւններով և մի որոշ ժամ

թիւնը կատարվել է առանց ինձ և միակողմանի, որի համար ես դիմելու եմ դատարանին, որտեղ ամեն ինչ կը պարզվի։

Մինայ Սարգսեանց

—

Գանձակ, յունիսի 9-ին

Գիտութեան պաշարից զուրկ և ժամանակի անհօրմալ դրութեան յարմարվող՝ մեր քաղաքի հոգևոր հայրերը, մոռանալով իրանց կարգացած աւետարանի մարդասիրական լայն ոգուն քնելն, հետևում են անաբնականացեղ գաղափարին։ Կղերական այս դասակարգը, դէմ ելնելու տենչով վարակված, հնարել է «բոյկոտ»-ի սխեմեը գործադրել եկեղեցու մէջ, մինչև անգամ զէպի ննջեցեալները երևակայելով, թէ այդպիսով առաջադէմ տիրոջին կարծանեայ։ Մինչդեռ աշխարհին յայտնի է Գանձակի քահանաների մուռը մնանութիւնը։ Ի՞նչ ասել է «բոյկոտ» բառը, կամ թէ ում դէմ կարելի է գործադրել, այս հարցին թող պատասխան տան մեր աւելով հաւաքած տէրտէրները։

Եթէ քիչ պարտաւոր ոճ եմ գործածում զէպի փարիսեցի հայրերը, դա ինձ իրաւունք է տալիս նրանց այն նոզկալի վարմունքը, որ կատարեցին զէպի իմ մեռած թոնդագին ծնող մայրը, այն էլ եկեղեցու մէջ, անագին բազմութեան առաջ։

Ամսիս 3-ին մեռաւ իմ ծերունի մայր՝ Մեհրի Համասիէանը, որի յուզարկաւորութիւնը փառաւոր լինելու համար։ ցանկացանք հրաւիրել տեղիս առաջնորդական փոխանորդին, որը Թիֆլիս գնացած լինելով չայրվոլեց։ գիմեցինք աւագ քահանային, խնդրելով, որ նամսիս 4-ին, հրաւիրելով քաղաքիս քահանայական դասը, մօրս յուզարկաւորութիւն ու թաղումը շքով կատարէ։ Այդպէս էլ եղաւ։ եկաւ քահանայական դասը և հասարակութեան յարգով բաղմութեան հետ տան կարգը կատարելով՝ տարաւ եկեղեցի։ Այդ օրը, որ Ս. Էջմիածնի ծոնն էր և Վեհափառ Հայրապետի համար մաղթանք էր կատարվում, եկեղեցում հոծ բազմութիւն կար։ Երբ ամենինչ վերջացաւ և հերթը հասաւ թափօր կազմելու ննջեցեալին տանելու զէպի գերեզմանատուն, յանկարծ պատարագիչ քահանան ընդմիջելով լուծեց թափորը և խոյս տուեց զէպի պահարան։ Նրան հետևեցին և միւս քահանաները ու յայտնվեց, որ «բոյկոտ» են հրատարակել՝ չը մասնակցել ծնողիս թաղմանը։ Այդ խայտառակ ու անմիտ «բոյկոտի» հանելուկը ոչ ոք չը կարողացաւ լուծել։ Միայն աւագ քահանան բացատրեցին կազմից և մի քանի տիրացուների և խուռը բազմութեան հետ մասնակցեց յուզարկաւորութեանը։

Քահանաների այդ տեսակ անտգամ անպատուութիւնը զէպի մի տոմսական և պատկառելի ննջեցեալ և զէպի նրա սգաւոր զաւակները ու ազգականները հրքան վիրաւորական է, թողնում եմ դա հասարակաց դատաստանին։

Կղերական այդ «բոյկոտ»-ից սաաջ եկած պանգան թիւր կարծիքներ փարատելու համար ստիպված եմ ձեր անաչառ թերթի միջոցով բացատրութիւն պահանջել «բոյկոտ» անող տէր հայրերից։ Արժ. հայրեր, ինչէց ստիպված կատարեցիք այդ յանցաւոր անարգութիւնն և պարտաւելի արհամարհանքը զէպի յաւիտենական աշխարհ գնացող մի ծերունի յարգված սիկնոջ յիշատակը ի մեծ ցաւ նրա զաւակներին։ Եթէ քոյր չէք բարեհաճի արդարացուցիչ բացատրութիւն տալու, կամ հրապարակով ներողութիւն խնդրելու, այն ժամանակ ես իրաւունք կը համարեմ ձեր վարմունքը բարբարոսական անուանել ու ձեր անցեալ ու ներկայ տիրոջ պատկերները ի լուր աշարհի հրատարակել։

Նիկ. Համ.

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Անցեալ երկուշաբթի օրը կովկասեան Փոխարքայի օգնական Միկկելվիչի նախագահութեամբ հայոց եկեղեցական կալուածքների եկամուտը հոգևոր կառավարութեանը յանձնելու համար կայացած ժողովում նպատակայարմար է համարված այդ գումարները յանձնել հոգևոր կառավարութեանը, նրան վերապահելով գումարների բաժանումը։ Այդ պատճառով փոխադրել էջմիածնի սինոդի առնունով, բացի արդէն յանձնված 70 հազար ռուբլուց, եկամուտի մէջ մնացորդները, պահելով միայն 3000 ռուբլի, որը առժամանակ մինչև կալուածքի յանձնումը, պէտք է հայ յանձնման ծախքերը հոգալու համար։ Ամբողջ եկամուտը եղել է 289,000 ռուբլի, բացի Տիրոքի և Դաղստանի շրջաններում, Քութայիսի նահանգում և Սուխումի շրջանում գտնված կալուածքների եկամուտից։ Իսկ ծախք մինչև այժմ արդէն կատարված է 120 հազար ռուբլի և վերադարձված է հոգևոր վարչութեան 70 հազար ռուբլի։ Ուրեմն վերադարձնելու մնում է դեռ 90 հազար ռուբլի։

Այսօր, յունիսի 22-ին Կովկասի զինուորական—նահանգական դատարանում, Ներքին Վէշերի նախագահութեամբ քննվելու է Մինգրելիսկի 16-րդ Գրենադերական գնդի մեղադրվող զինուորների՝ Ֆ. Սպօրնիյ, Ա. Նիկիֆորովի, Ն. Սօկովի, Կօրայիձէի և ուրիշների գործերը։ Մեղադրվողներին պաշտպանում են կապիտ. Վեղիրով և Ուսինովսկին՝ իսկ մեղադրում է զինուորական դատախազ Վասրասօբլին։ Մեղադրվողներից Սպօրնին, Նիկիֆորովը, Սօկովը, Օվսովը և Բերեզուցկին մեղադրվում են այն բանում, որ նրանք, այս տարվայ մարտի 26-ին, երբ Մինգրէլսկի գնդում անկարգութիւններ տեղի ունեցան, նրանք օրապահ օֆիցէրի Բօգօմօլովի կողմից ուղարկած ֆելդֆեբելին չը թոյլ տուին տանելու միտինգի ժամանակ ձերբակալված զինուորների արկղները, որպէսզի օֆիցէր Բօգօմօլովը խուզարկէ։ Վերոյիշեալ զինուորները, այդ վարմունքի համար զինուորական դատի են ենթարկված, համաձայն զինուորական դրութեան կանոնագրութեան 110-րդ յօդուածի։ Բացի դրանից, նոյն զինուորները և Ս. Բաքաեվը, Դ. Ֆեղերովը, Ի. Կատունովը, Ա. Մեգվեդևը, Ա. Վօլկը, Յ. Ենդերը, Ա. Բոյկոն, Վ. Դուրասով, Ն. Բեզցօվը, Ս. Գերվերիդզէը, Ի. Պարշինը, Ա. Իվանչենկոն, Ե. Պնիկինը, Ս. Գրժեսկովսկին, Ի. Կօրախէչն, Դ. Մանուկովը, Ա. Անշտէյնը, Ն. Մաճավարանին, Տ. Գրիգօրիեվը և Կ. Բօգաեվը մեղադրվում են նրանում, որ նրանք, իմանալով որ միտինգին ձերբակալել են 7 զինուորի, ժողով գումարեցին, հրաւիրեին Մինգրելսկի գնդի զինուորներին մէջից գտնելու իշխանութեան ձեռքից ազատելու բատարկվածներին, իսկ երբ կապիտ. Բօգօմօլովը առաջարկեց նրանց ցրվել, նրանք այդ առաջարկը չը կատարեցին, պահանջելով, զէնքը ձեռքին, ազատել բանտարկված զինուորներին։ Նրանց հետ միացաւ ամբողջ գունդը, բացի 14-րդ րօտայից, որը, ֆելդֆեբելի կարգադրութեամբ, կրակ բացեց առաջինների վրա, և որին առաջիններն էլ պատասխանեցին նոյնով։ Զինուորներ՝ Ե. Սմօլենսկին և Միհեեվը մեղադրվում են այն բանում, որ դրանք, վերոյիշեալ նպատակը կատարելու համար Մինգրելսկի գնդի զանազան մասերում ագիտացիա էին անում։ Գործը կը քննվի գնդական Մեղադրողի կողմից կանչված են 40 վկաներ, իսկ մեղադրվողների կողմից 30 վկաներ։

—

Թիֆլիսի քաղաքապետի պաշտօնավար Վ. Ն. Զերբեզօվը խնդրում է ժամանակաւոր գիներալ-նահանգապետին թոյլ տալ անօնիմ ընկերութեան վերատեսչին վերընդունելու արտվայի այն ծառայողներին, որոնք նրա կարգադրութեան համաձայն յունվարի 12-ին հեռացված են պաշտօնից։

—

Սարդարօվը միջնորդութիւն յարուցեց թոյլ տալ իրան հրատարակելու Դանձակում ամենօրեայ լրագիր «Волна» անունով։

—

Յունիսի 16-ին, Բօրժոմում բռնվել են երկու թուրքեր, մէկը Գանձակից, իսկ միւսը տեղական, որոնք բերդանի 4000 փամփուշտներ էին տանում Զալդիրի քոչատեղը, որ գտնվում է Բօրժոմից 70 վերստ հեռու։ Կալանաւորներին ուղարկել են Գօրիի բանտը։

—

Կովկասեան Փոխարքան թոյլատրել է վերադառնալ իր նախկին բնակավայրը Կաղզուան, հայ—գաղթական Ենկօ Զարիբեանին, որ ադմինիստրատիւ կարգով աքսորված էր Տօբոլեան նահանգը։

—

Յունիսի 20-ին, գործադուլ են արել Թիֆլիսի օդկազրձարանների բոլոր բանւորները և անտեսական պահանջները են առաջարկել իրանց գործարանատէրերին։

—

Կվիրիլայից հեռագրում են «Երօմա» լրագրին յունիսի 20-ին հետևեալը. «Երէկ մի անյայտ մարդ ուզեց նեռեց պրիստաւի օգնական Նէմսաձէի վրա և ոտից ծակը կերպով վիրաւորեց նրան։ Պահապանները հրացաններից կրակեցին, սպանելով Թէրձի Աբաշիձէին և վիրաւորելով վաճառական Մախարաձէին։ Իսկ ոռմբը նետողը անյայտացաւ։ Զինւորները սանձարիս վերաբերվեցին այդ դէպքին և հրացանաձգութեան մէջ չը մասնակցեցին»։

—

Յունիսի 15-ին ամբողջ օրը Պետերբուրգում լուր էր պատում, որ Պետերհոֆում շատ բարեհաճ կերպով են վերաբերվում հասարակական մխիթարութեան կազմելու հարցին։ Մինիստրական պրոգրէսները, լուրերի համեմատ, բաժանվելու են հետեւեալ կերպով. Ներքին գործերի մինիստր՝ Ն. Լվով, ֆինանսների՝ Տեմիրեազով, երկրագործութեան՝ Կուտլեր, ժողովրդական լուսաւորութեան՝ Միլիւկով, արաքին գործերի՝ Մակսիմ Կովալէվսկի, արդարադատութեան՝ Կուզմին-Կարավաեվ, զինուորական՝ Գոսիչ, ծովային՝ Բուխլով, սինոդի օբէր-պրոկուրոր՝ Օբոլենսկի, պրէմիէր առանց պորտֆելի՝ Ս. Ա. Մուրոմցեվ։ «Слово»

—

«Бирж. Вѣд.»-ի լրագիրը հաղորդում է հատաաց աղբիւրից, որ Պետական Խորհրդի կենտրոնը քննում է մինիստրութեանը անվըստահութիւն յայտնելու անհրաժշտութեան հարցը։

—

«Дума»-ի մէջ տպագրված է. «Հէնց այս րոպէիս մենք տեղեկութիւն ստացանք, որ կիրսիրների գնդում օֆիցերական դաւադրութիւն է բացված Պետական Դումայի դէմ։ Քննութիւն է կատարվում»։

—

Հատատ աղբիւրներից «Рѣчь»-ը տեղեկացել է, որ ներքին գործերի մինիստրութիւնը հարց է բարձրացրել գործադուլի համար արձակված բոլոր պօստ-հեռագրական ծառայողներին վերընդունել ծառայութեան մէջ։ Այդպիսիների թիւը ամբողջ Ռուսաստանում 400-ից աւել չէ։

—

Ներքին գործերի մինիստրութեան ստացած վերջին տեղեկութիւններից երևում է, որ սով է զգացվում Ռուսաստանի 230 գաւառներում։

—

Լրագիրներում հաղորդված էր, որ «Воен. Гол.»-ի մէջ լոյս տեսած «Գնդապետ Բիման արդարացէք» յօդուածի պատճառով, քննութիւն է կատարվում գնդապետի գործողութիւնների մասին։ Այժմ ինչպէս հաղորդում է «Рѣчь»-ը, հիմնաւոր աղբիւրներից իմացել է, որ վերոյիշեալ լուրը ստոյգ չէ։ յիշեալ յօդուածը լոյս տեսնելուց յետոյ, արդարև սկսված է, բայց ոչ թէ գնդապետ Բիմանի գործողութիւնների մասին, այլ իմանալու թէ ով է յօդուածի հեղինակը և թէ ասնատարակ ով է մասնակցում «Воен. Гол.» լրագրին, որ շատ անհաճոյ է կրթութեամբ վաստիներին, իսկ համոզմունքներով՝ Ջարդարներին։

—

«Times» լրագրի փետրվարի 4-ի այս տարվայ համարում տպագրված էր իր Պետերբուրգի թղթակցից ստացած մի հեռագիր, ամենահատատ աղբիւրի վրա հիմնված, հետեւեալ բովանդակութեամբ. «Կոմս Վիտտէին հաղորդեցին, որ ոստիկանական դէպարտամենտում տպագրվում են գեներալներ Բոգդանովիչի և Տրեպովի կազմած թռուցիկները, որով կոչ է անում ազգաբնակութեան Ջարդի ենթարկել հրէաներին ու լիբերալներին։ Վիտտէն Ֆիլօսոֆովի և իշխ. Ուրուսովի հետ գնաց ոստիկանական դեպարտամենտը և այնտեղ, արդարև, համոզվեց, որ ստացված տեղեկութիւնը ճշմարիտ է։ Այդ հանդամանքի ազդեցութեամբ Վիտտէի և Դուրնովոյի մէջ տեղի ունեցաւ շատ եռանդուն մաքերի փոխանակութիւն, որից յետոյ Վիտտէն իսկոյն գնաց Պետերհոֆ, բայց այնտեղ չը կարողացաւ գտնել այն աջակցութիւնը, որ սպասում էր։ Հաղորդում են, որ իշխան Ուրուսովը և Ֆիլօսոֆով պատրաստվում են հրաժարական տալու։ Այդ հեռագիրը չը նայելով «ամենահաւատի» աղբիւրին, այնուամենայնիւ այն ժամանակ առանձին տպաւորութիւն չը թողեց, որովհետև համարվեց այն բազմաթիւ սենսացիաներից մէկը, որով լի էին արտասահմանեան և ռուսաց մի քանի լրագիրները։ Կառավարութիւնը պաշտօնապէս չը հերքեց այդ տեղեկութիւնը, ինչպէս որ արեց Պլեվէն Բիշինեվի ջարդից անմիջապէս յետոյ մի ուրիշ նոյնատեսակ լուրի առիթով, այդ պատճառով էլ յիշեալ հեռագիրը շուտով մոռացվեց։ Ռուսաց լրագրներից շատերը նոյնիսկ չը տպեցին այդ հեռագիրը, իսկ ոմանք էլ տպելով դուրս ձգեցին գիներալների անունները։ Այժմ իշխ. Ուրուսովը Դումայում արտասանած ճառից յետոյ, որ կատարելապէս հաստատում է «Times»-ի յիշեալ հեռագիրը, ինչպէս ըստ ինքեան դուրս են սանում նորից այն գիներալների անունները, որոնց, «հաւատի աղբիւրներից» քաղելով, լրագիրը թռուցիկների հեղինակ էր անուանում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԴՈՒՐՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յունիսի։ Պաշտօնական։ «Правит. Вѣстн»-ում տպված է կառավարական մի հաղորդագրութիւն, որի էութիւնը պարզվելու է հետեւեալով. «Գործադրելով Բարձրագոյն տուած հրամանը—անմիջապէս միջոցներ ձեռք առնել՝ հողային գիւղացիութեան կենցաղը բարելաւելու համար, կառավարութիւնը Պետական Դումա մացրեց իր ենթադրութիւնները այն միջոցների մասին, որոնցով կարելի է բարելաւել և ընդլայնել գիւղական երկրագործութիւնը, և փոխադարձ ենթարկել գիւղացիների հողից օգտվելու եղանակը—իրանց բաժանելի հողերի վրա։

Նախագծված միջոցները կայանում են հետեւեալում. 1) Յանձնել հողասաաաս գիւղացիներին—նրանց համար շահաւէտ պայմաններով—երկրագործութեան համար պիտանի պետական բոլոր հողերը. 2) Պետական հողերի պահպանութեան դէպքում—գիւղացիութեան ամբողջ հողասաաաս մասի հողային կարիքներին բաւարարութիւն տալու համար—գնել պետութեան հաշուով մասնաւոր հողատէրերից ինքնակամ վաճառվող հողերը. 3) Պետութեան հաշուով ձեռք բերած հողերը վաճառել հողային տեսակէտից կարիքաւոր գիւղացիներին մասնչելի գներով, և հարկ եղած դէպքում զանազանութիւն դնել այն գների մէջ, որով սկզբում գնված էր մասնաւոր հողատէրերից, և որով պէտք է վաճառվի գիւղացիներին—ընդհանուր միջոցներով. 4) Որոշել, որ պետութեան՝ հողասաաս գիւղացիներին տուած հողերը—բաժանելի հողերին համահաւասար կերպով չեն կարող վաճառվել ուրիշ դասերի անձանց, և որ այդ հողերը մասնաւոր անձանց պահանջներին զոհացման մէջից չեն կարող ծառայել. 5) Ընդլայնել գաղթողների—մի տեղից միւս տեղը տեղափոխման օգնութիւնը. 6) Սահմանել ուսի գիւղին եղանակ, որով գաղթող, կամ թէ ոչ երկրագործութեամբ զբաղվող ցանկացող գիւղացիները կարողանան վաճառել իրանց—ինչպէս սեփական, այնպէս էլ օտար հողերը. բարելաւել գիւղացիների հողից օգտվելու միջոցները իրանց հողերի վրա, ցանկացողներին ուրիշ տեղը բնակեցնելով, գիւղական հողաբաժինների կըտոր-կտոր ցրված դրութիւնը վերացնելով և նրանց կալուածքների մէջ եղած մանը հողաբաժինները աւելի խոշոր հողամասերի վերածելով. 8) Ընդունել, որ այն հասարակութիւնները, որ 23 տարվայ ընթացքում հողերի ընդհանուր բաժանումը չեն գործադրել—իրաւունք ունեն տիրանալ վերջինականապէս այն հողաբաժիններին, որոնք մնասվում էին առանձին տնատէրերի ձեռքով, և, որ, ուրեմն, այդօրինակ հասարակութիւնների մէջ հողերի բաժանում տեղի չի ունենալ այլ ևս. 9) Իրաւունք տալ մասնաւոր գիւղացիներին դուրս գալ իրանց հասարակութիւնից և իրանց սեփականութիւն դարձնել այն անձանց հողաբաժիններ, որոնք դուրս են գալիս հասարակութեան կազմից—վճարելով այդ հողերի համար գրամարժէքը. 10) Հողային համայնքներին իրաւունք տալ ինքնուրոյնապէս տնօրինել իրանց պատկանելի հողերը, և կառավարութիւնը գործակալի միջով սոսկ հսկի, որ հասարակութիւնները չը խախտեն օրէնքի պահանջները. բացի դրանից կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում գիւղացիների գաղթականութիւնը դէպի Սիբիր և Միջին Ասիա, ուր պետութեան հրամանի համաձայն կան պտղաւէտ հողերի ընդարձակ տարածութիւններ, և վերջապէս, գիւղացիութեան աւելի կարիքաւոր մասի դրութիւնը շուտափութեամբ բարելաւելու նպատակով կազմվում են առանձին մասնաժողովներ տեղական մարդկանցից, որոնց կազմի մէջ կը մտնեն և շրջանային խորհուրդներից ընտրված գիւղացիք։ Այդ մասնաժողովները պարտաւոր են պարզել աւելի կարիք զգացողների թիւը և օգնել գիւղացիներին՝ գիւղական հողային բանկի միջոցով մասնաւոր սեփականատէրերի վաճառվող հողերը գնելու։ Իսկ շինական ազգաբնակութեան մէջ տարածված այն համոմունքը, թէ հողը չէ կարող որևէ մէկի սեփականութիւն դառնալ, այլ պէտք է գտնվի աշխատաւորների շահագործութեան համար, և ուրեմն անհրաժշտ է մասնաւոր սեփականատէրերի հողերը տիպարաբար գրաւել,—կառավարութիւնը ընդունում է այդ բոլորովին սխալ և պնդում է, որ անյողդող կը պահպանէ բոլորի և իւրաքանչիւրի ստացուածքային իրաւունքները և կարծում է, որ մասնաւոր սեփականատէրերի սեփականութեան իրաւունքը պաշտպանելով հողային գիւղացիութիւնը պէտք է, որ թանդ գնահատէ այդ իրաւունքը, որովհետև եթէ հողատէրերի և մեծատուն դասերի իրաւունքները խախտում են, կը նշանակէ վաղն էլ կը խախտվեն և՝ գիւղացիների իրաւունքները։ Ռուս գիւղացիութիւնը պէտք է, որ հասկանայ և յիշէ, որ նա իր կարիքների բաւարարութիւնը չը պէտք է խռովութիւններից և քոնութիւններից սպասէ, այլ իր խաղաղ աշխատանքից և թագաւոր Կայսրի այդ մասին մշտապէս հոգալուց։

21 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յունիսի։ Ժողովրդական ազատութեան կուսակցութեան պարլամենտական ֆրակցիան, ինչպէս հաղորդել էինք, Պետական Դումա էր մացրել մամուլի վերաբերեալ օրէնագիծը, որի էական կէտերն են. ամբողջ մամուլի իսկական ազատութիւն անց կարելի է քաղաքացիական ազատութիւն և ժողովրդի հոգեկան և նիւթական ոյժերի զարգացում. օրինագիծը չէ ընդունում որևէ ուրիշ տեսակ սահմանափակումներ, բացի հասարակական ապահովութեան և քաղաքացիական բարքի պահանջների թելադրած մի քանի սահմանափակիչ դէպքերից։ Խօսքը առաւելապէս քաղաքացիների ներքին կեանքը յանդուգն ոտնձգութիւններից և յարձակումներից պաշտպանելու մասին է։

Մամուլի արտադրութիւնները ենթարկվում են միմիայն երդուեալների դատարանին. նախագիծը իր մէջ չէ պարունակում ցուցակագրութեան սիստեմ և լրագիրներ և թերթեր տպագրելու և հրատարակելու իրաւունքը ընդհանուրին է ընդունում. իրաւաքանչիւր անձ կարող է հրատարակել առանց նախօրօք տեղեկացնելու ադմինիստրատիւ հաստատութիւններից մէկին ու մէկին, այլ սոսկ յայտարարական կարգով (явочнымъ порядкомъ). մամուլի օրինաւորութեան դէպքում պատասխանատուութեան են հրաւիրվում մարդիկ, ոչ թէ հրատարակութիւնները։ Նախագիծը հեռացնում է լրագիրների և ամսագիրների համարների նախնական գրաւումը, օտարազգի հրատարակութիւնները ոչ մի ճնշումի չեն ենթարկվում. մինչև 1903 թուի քրէական պատժագրքի փոփոխելը անհնար է պատի պահպանել մամուլի զանցառութիւնների համար սահմանած 129-րդ յօդուածը։ Կապարատական իրաւունքի և շինական բանւորների վարձելու հարցերը քննելու համար ընտրված մասնաժողովի կազմի մէջ մտնում են—Շաքօշչիկով, Վլասով, Լիսենկօ և Մերկուլով աշխատաւորականները, իշխան Լվով, Վասիլչիկ, Գեորգաժկին, Կուրուչկինը և Սաֆոնով կադետները, Վիազլով, Գիկաղդ և Ֆլիորկովսկի աւտոնոմիստները և Սկերմունդ, իշխ. Վօլկոնսկի ու Սկվորցով անկուսակցական—ներ։ — Տեղական հողային բարկոմիսիաներին վերաբերեալ օրինագիծը մշակող մասնաժողովի համար ագրարային մասնաժողովը ընտրել է աշխատաւորականներ՝ Էլդերժանովին, Ուլիանովին, Անսկինին և Սիդէլնիկովին, կադետներ՝ Իմշենեցկուն, Դօլգորուկովին, Օրօլենկուն, Մ. Կովալէվսկուն և Ա. Սավէլովին և աւտոնոմիստներ՝ Վիսկովսկուն, աջակողմեան և անկուսակցական—Եֆրեմովին, Խորլատին և Մուլինին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունիսի։ Լրագիրների հաղորդած լուրը, որ իբր Բէլօստոկում զինւորական մինիստրի լիազօրները ժողով են գումարել՝ քննելու զօրքի ունեցած դերը Ջարդի ժամանակ,—հիմքից զուրկ է։—Զարատօվի նահանգական դատարանի անդամ Սենտէրը վերջացրել է հոկտեմբերեան Ջարդի գործի նախնական քննութիւնը։ Սենտէրը մեղադրում է ոստիկանական անգործունէութեան և իշխանութիւնը ի չարը գործ դնելու մէջ և նախկին փոխ-նահանգապետ իշխան (?)-ին։ «Новое Время» հաղորդում է, որ Պլեվիսի ռուս դեսպանը ներկայացրել է չին կառավարութեան հետեւեալ 5 առաջարկութիւնները. 1) Ռուսաստանը համաձայնվում է վերադարձնել Զինաստանի Իլիսնիաչի ոսկի որոնատեղիները այն պայմանով, որ դրանց մշակումը Ռուսաստանը և Զինաստանը միասին. 2) Ռուսաստանը համաձայն է դատարկել հիւսիսային Մանջուրիան, պահելով միայն զօրքերի մի որոշ մասը, որ անհրաժեշտ է երկաթուղային գիծը պաշտպանելու համար. 3) Ռուսաստանը համաձայնվում է Զինաստանին յանձնել Գիրինի և Խլունկիանկի հեռագրաթելերը. 4) Զինաստանը պարտաւորվում է Ռուսաստանի հետ միասին ձեռնարկել անատաարդիւնարերութեան՝ Լեկնանգի և Եալուի հովիտի անատանները շահագործելու համար, 5) Զինաստանը Ռուսաստանին է վերապահում հիւս. Մանջուրիայի և Մոնղոլիայի հունքերի մշակման և երկաթուղի կառուցման նախաձեռնող իրաւունքը։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մտադիր է Դումա մացնել մի նախագիծ՝ հաստատելու մի քանի նահանգներում կանանց ուսուցչուհիների 14 նոր սեմինարիաներ—4 տարվայ դասընթացքով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունիսի։ Պետական Խորհրդի նախագի նախագիծը. (շարունակութիւն)։ Յանձնելով վերացնել կամ փոփոխութեան ենթարկել ծրագրվող կամ նոր հրատարակվող օրէնքը; Խորհուրդը կարող է որոշել համապատասխան օրինագծի մշակման ժամանակամիջոցը։ Ոչ պակաս քան երեք ամիս ժամանակամիջոց Խորհուրդը կարող է որոշել միայն հարկաւոր մինիստրի հետ նախօրօք համաձայնութեան գալով։ Եթէ 7 օրվայ ընթացքում հարկաւոր մինիստրը Խորհրդին չը յայտնէ իր համաձայնութիւնը՝ օրինագիծ կազմելու և Խորհրդի առաջարկած ժամանակը որոշելու մասին, կամ եթէ նա այդ ժամանակամիջոցում չը փոյթ օրինագիծը,—Խորհուրդը նախագիծ մշակումը յանձնում է իր ընտրած մասնաժողովին։ Պետական Խորհրդի մերժած յայտարարութիւնները — զործադրվող օրէնքը վերացնելու կամ փոփոխելու նկատմամբ—չեն կարող վերսկսել Խորհրդի նոյն նստաշրջանի ընթացքում։ Մինիստրների և սրանց ենթակայ անձանց ապօրէն գործողութիւնների, ինչպէս և հարկաւոր ցուցմունքները տալու անկարողութեան մասին Խորհրդին կարելի է յայտնել կամ գրաւոր կամ բերանացի։ Պետական Խորհրդի գործերը ուղարկվում են անգամներին ոչ ուշ, քան նախատից երեք օր առաջ։ Խորհուրդը քննում է հետեւեալ գործերը. 1) Նախագծի հիմնական կէտերը, 2) Յօդուածային քննութիւն, 3) Նախագծի բոլոր յօդուածների խմբագրութիւնը համաձայնեցնելով Խորհրդի որոշումների հետ, 4) Ամբողջ նախագծի ընդունելութեան կամ մերժման հարցը։ Նախագծի մերժման հարցը—ի նկատի ունենալով որ չէ թոյլատրվում քննել,—կարող է քննվել առանձին կերպով նախագահի կամ Խորհրդի 10 անդամների առաջարկութեամբ։ Եթէ նախագահը հարկաւոր է համարում գործը յանձնել շտապողական կարգով ի քննութիւն, այն ժամանակ գործը կարելի է ուղարկել անդամներին մինչև նիստը։ Մինիստրների ֆինանսական եղումները, ինչպէս և պետական նախահաշիվ նախագիծը և այդ առթիվով Պետական Դումայի գրած որոշումները անմիջապէս յանձնվում են Խորհրդի ֆինանսական մասնաժողովին և Խորհուրդը այդ բոլորը քննում է ոչ այլ կերպ, եթէ ոչ մասնաժողովի եզրակացութիւնների հետ համակերպվելով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունիսի։ Բարձրագոյն ուկազով Օդեսայի գաւառը և Խերսոնի նահանգը հրատարակված են զինւորական դրութեան մէջ։—Այսօր սկսվեց բանւոր պատգամաւորների խորհրդի գործի քննութիւնը։ Ընդունելութիւնը շատ խիստ է. վկաներ կանչված են 450 մարդ, որից չեն եկել 100-ը։ Վկաներից մեծ մասը բանւորներ են, որոնք շատ երկար տանջվել են բանտարկութեան մէջ։ Սառնութիւնը կը տևէ մինչև երեկոյեան։ Մեղադրվում են 52 հոգի, պաշտպանում են 28 փաստաբաններ։ Թերևս գործը յետաձգվի—կարեոր վկաների բացակայութեան պատճառով, իսկ եթէ տեղի ունենայ, այդ դէպքում կը տևէ մօտ մէկ ամիս։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գուվիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱԹԱՒՈՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մկանաբ. հ.
Կ. Մ. ՁԻՆՕՎԱՆԻ—9½—10 ժ. տէթի. ներքին և նեարդային։
Մ. Դ. ԱԽԵՏԻՄԵԱՆ—11—12 ժ. մարթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԳԱՐԱԳԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԱՆԵՐԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Գ. ԱԲԵԱՆՑ—5—6 ժ. ներքին հիւանդ.
Ա. Մ. ՓՈՒՌԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկաաա.։
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—7—7 և կէս ժ. ներքին և երեխայոց հ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Հանրաքննիչ (հոն ոչխարմէ) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վիճակաւոր՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

Շաբաթ, յունիսի 19-ին, մեր ընկերներ Որթնաշատ գիւղի բնակիչներ Յովհաննէս Յարութիւնեանը և Կափիեվը Մցխէթ կայարանի մօտ մասն կուռ գնալը լսցանալու, և խեղդվեցին։ Դիակները մինչև այժմ էլ չեն գտնված։ Խնդրում ենք, ով դիակները գտնի մեզ հաղորդի, որի համար կը ստանայ լաւ վարձատրութիւն։ Մեր հասցէն՝ Тифлисъ, гостинница «Боржомъ» Айрапету Ишханянцъ. 1—2

ԲԺԻՇԿ
Տ. Իսահակեան
Ներքին, երեխայոց և վեներական հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը։
Վելեամինսկայա փողոց № 22, Նաւթկովի տանը։ (Ն. Հ. Հ.) 3—15

ԲԺԻՇԿԱՊԵՏ
Մ. Գ. ՋԱԽԱՐԻԵԳԵԱՆ
Ներին եւ ներվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7։ Լիրմոնտովսկայա փողոց, տուն № 16։ Տելեֆոն № 1087։
(ա. օ.) 50—50

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մանգաէա միջային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւններ։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրոսպէկտի և Կաղտասկայա փողոցի, տուն Թամաշեանի։ Մուտքը Կաղտասկի փողոցից № 2.
(ա. օ.) 179—300

Գանձակում տեղի ունեցած բնդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒԱՆՈՑ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավսլաւնի հոգեւոր սեմինարիայի դիմաց
„ՆՈՄԵՐԱ ՅԵՆՏՐԱԼ“
մականունով։ Գները 70 կոպէկից մինչև 2 ռուբլի։ Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով։
Ալէքսանդր Յարութիւնով
(Հ. Կ. Ե.) 29—100

8 տարի ուսուցչութիւն և խմբապետութիւն արած
ՆԵՐՍԻՍԵԱՆԱՒԱՐՏ
ՄԻ ՔԱՀԱՆԱՅ
որոնում է նահանգական կամ գաւառական քաղաքներում ՏԵՂ։ Համաձայն է զբաղցնելու աւանդել դասեր, եկեղեցու համար ըստ եկամտի ներդաշնակութեան քառ